European Commission

Եվրոպական կանաչ գործարք

Եվրոպական կանաչ գործարք

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Երևան 2020

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Climate
Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine

UNDP

Այս գրքույկի ձևավորումը և տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Եվրոպական հանձնաժողովը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Այս գրքույկի ձևավորումը և տպագրությունն իրականացվել է «ԵՄ-ն կլիմայի համար» ԵՄ-ՄԱԶԾ տարածաշրջանային ծրագրի շրջանակներում: Ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության վեց երկրների կառավարություններին, այդ թվում՝ Հայաստանին, դիմակայել կլիմայի փոփոխությանը: Այն աջակցում է երկրներին «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի իրագործման և կլիմայինառնչվող քաղաքականությունների և օրենսդրության բարելավման հարցում: Ծրագրի նպատակն է՝ սահմանափակել կլիմայի փոփոխության ազդեցությունը քաղաքացիների կյանքի վրա և ավելի դիմակայուն դարձնել նրանց: «ԵՄ-ն կլիմայի համար» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության (ԵՄ) կողմից և իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ՀՐԱՏԱՊ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ ՎԵՐԱԾԵԼ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ 5

2. ԵՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ 9

2.1. Արմատապես վերափոխող քաղաքականությունների մշակում 9

2.1.1. ԵՄ կլիմայական հավակնության ավելացում 2030 և 2050 թվականների համար 10

2.1.2. Մաքուր, մատչելի և անվտանգ էներգիայի մատակարարում 13

2.1.3. Արդյունաբերության մոբիլիզացում մաքուր և շրջանաձև տնտեսության համար 15

2.1.4. Կառուցել և վերանորոգել էներգաարդյունավետ և ռեսուրսաարդյունավետ մոտեցմամբ 20

2.1.5. Արագացնելով անցումը դեպի կայուն և խելացի տրանսպորտի 22

2.1.6. Ֆերմայից սեղան. արդար, առողջ և էկոլոգիապես մաքուր պարենային համակարգի ձևավորում 25

2.1.7. Էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանում և վերականգնում 27

2.1.8. Շրջակա միջավայրի աղտոտվածության հավակնություն՝ հանուն թունավոր նյութերից զերծ միջավայրի 31

2.2. Կայունության ինտեգրումը ԵՄ բոլոր քաղաքականություններում 33

2.2.1. Էկոլոգիապես անվտանգ գործունեության ֆինանսավորման և ներդրումների ներգրավում և արդար անցման ապահովում .. 33

2.2.2. Անցում «կանաչ» ազգային բյուջեի և ճիշտ գնային ազդանշանների հաղորդում 37

2.2.3. Հետազոտությունների մոբիլիզացում և նորարարությունների խթանում 39

2.2.4. Ակտիվացնելով կրթությունը և ուսուցումը.... 40

2.2.5. Կանաչ երդում. «Մի՛ վնասիր» 41

3. ԵՄ-Ն՝ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ԱՌԱՋԱՏԱՐ 43

4. ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼ ՄԻԱՍԻՆ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ 49

ՀԱՎԵԼՎԱԾ. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՆԱՉ ԳՈՐԾԱՐՔ»-Ի ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆԸ 53

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ – ՀՐԱՏԱՊ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ ՎԵՐԱԾԵԼ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Սույն հաղորդագրությունը սահմանում է «Եվրոպական կանաչ գործարք»-ը Եվրոպական միության (ԵՄ) և նրա քաղաքացիների համար: Այն վերասահմանում է Հանձնաժողովի հանձնառությունը լուծելու կլիմայի և շրջակա միջավայրի հետ կապված մարտահրավերները, որը ներկա սերնդի կարևոր խնդիրն է: Մթնոլորտը տաքանում է, և տարեցտարի կլիման փոխվում է: Մոլորակի վրա ութ միլիոն տեսակներից մեկ միլիոնը անհետացման վտանգի տակ է: Անտառներն ու օվկիանոսները աղտոտվում և ոչնչացվում են[1]:

«Եվրոպական կանաչ գործարք»-ը արձագանք է այդ մարտահրավերներին: Դա աճի նոր ռազմավարություն է, որի նպատակն է **ԵՄ-ն վերածել արդար և բարեկեցիկ հասարակության՝ ժամանակակից, ռեսուրսաարդյունավետ և մրցակցային տնտեսությամբ, որտեղ 2050 թ. չեն լինի ջերմոցային գազերի զուտ արտանետումներ և, որտեղ տնտեսական աճը տարանջատված կլինի ռեսուրսների օգտագործումից:**

Այն նաև նպատակ ունի **պաշտպանել, պահպանել և ընդլայնել ԵՄ բնական կապիտալը, ինչպես նաև՝ պաշտպանել քաղաքացիների առողջությունն ու բարեկեցությունը շրջակա միջավայրի հետ կապված ռիսկերից և ազդեցություններից:** Միևնույն ժամանակ, այս անցումը պետք է լինի **արդար և ներառական**: Այն պետք է առաջին տեղում դիտարկի մարդկանց և ուշադրություն դարձնի տարածաշրջաններին, արդյունաբերության ճյուղերին և աշխատողներին, ովքեր կկանգնեն մեծագույն մարտահրավերների առաջ: Քաղաքականությունները գործելու և ընդունվելու համար հասարակության ակտիվ մասնակցությունն ու վստահությունն անցումային գործընթացի նկատմամբ առաջնային է, քանի որ այն էական փոփոխություններ է բերելու:

[1] Աղբյուրներ. (i) Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական հանձնաժողով (IPCC). 1,5°C գլոբալ տաքացման ազդեցության վերաբերյալ հատուկ զեկույց. (ii) Կենսաբազմազանության և էկոհամակարգերի ծառայությունների վերաբերյալ գիտական քաղաքականության միջկառավարական հարթակ. 2019թ. Կենսաբազմազանության և էկոհամակարգերի ծառայությունների վերաբերյալ համաշխարհային գնահատման զեկույց. (iii) Միջազգային ռեսուրսների խորհուրդ. գլոբալ ռեսուրսների հեռանկար 2019. բնական ռեսուրսներ մեր ցանկալի ապագայի համար; (iv) Շրջակա միջավայրի եվրոպական գործակալություն. Եվրոպական միջավայր՝ պետություն և հեռանկար 2020. գիտելիքներ կայուն Եվրոպայի անցնելու համար

Անհրաժեշտ է նոր համաձայնություն համախմբելու քաղաքացիներին իրենց ամբողջ բազմազանությամբ ԵՄ հաստատությունների և խորհրդատվական մարմինների հետ սերտորեն աշխատող ազգային, տարածաշրջանային, տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության ու արդյունաբերության շուրջ:

ԵՄ-ն ունի իր տնտեսությունն ու հասարակությունը փոխակերպելու հավաքական կարողություն՝ այն ավելի կայուն ուղու վրա դնելու համար: ԵՄ-ն կարող է հիմնվել իր ուժեղ կողմերի վրա՝ որպես կլիմայի և բնապահպանական միջոցառումների, սպառողների պաշտպանության և աշխատողների իրավունքների ոլորտում համաշխարհային առաջատար: Արտանետումների լրացուցիչ կրճատումներ ապահովելը մարտահրավեր է: Վիթխարի հանրային ներդրումներ և մեծ ջանքեր կպահանջվեն մասնավոր կապիտալը դեպի կլիմայական և բնապահպանական գործողություններ ուղղելու համար՝ միևնույն ժամանակ խուսափելով անկայուն գործելակերպերից: ԵՄ-ն պետք է լինի առաջնագծում՝ համակարգելու միջազգային ջանքերն ուղղված կայուն լուծումներին աջակցող համահունչ ֆինանսական համակարգերի ստեղծմանը: Այս նախնական ներդրումը նաև հնարավորություն է Եվրոպան կայուն և ներառական աճի նոր ուղու վրա դնելու համար: «Եվրոպական կանաչ գործարք»-ը արագացնելու և հիմնավորելու է բոլոր ոլորտներում անհրաժեշտ անցումը:

«Կանաչ գործարք»-ի բնապահպանական հավակնությանը հնարավոր չէ հասնել միայն Եվրոպայի մասնակցությամբ: Կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության կորստի շարժիչները գլոբալ են և չեն սահմանափակվում ազգային սահմաններով: ԵՄ-ն կարող է օգտագործել իր ազդեցությունը, փորձագիտությունը և ֆինանսական ռեսուրսները՝ իր հարևաններին և գործընկերներին մոբիլիզացնելու կայուն կերպով դրան միանալու համար: ԵՄ-ն կշարունակի առաջնորդել միջազգային ջանքերը և ցանկանում է դաշինքներ ձևավորել համախոհների հետ: ԵՄ-ն նաև գիտակցում է մատակարարման և մրցունակության իր անվտանգության պահպանման անհրաժեշտությունը, նույնիսկ եթե մյուսները չեն ցանկանում գործել:

Այս հաղորդագրությունը ներկայացնում է «**Եվրոպական կանաչ գործարք»-ին հասնելու համար անհրաժեշտ հիմնական քաղաքականությունների և միջոցառումների նախնական ճանապարհային քարտեզը**: Այն կթարմացվի, երբ կարիքն առա-

ջանա և ձևակերպվեն քաղաքականության արձագանքները: ԵՄ բոլոր գործողություններն ու քաղաքականությունները պետք է նպաստեն «Եվրոպական կանաչ գործարք»-ի նպատակներին: Մարտահրավերները բարդ են և փոխկապակցված: Քաղաքականության արձագանքը պետք է լինի համարձակ և համապարփակ և ձգտի առավելագույնի հասցնել առողջության, կյանքի որակի, դիմակայունության և մրցունակության համար օգուտները: Դա կպահանջի ինտենսիվ համակարգում օգտագործելու քաղաքականության բոլոր ոլորտներում առկա սիներգիան[2]:

«Կանաչ գործարք»-ը Միավորված ազգերի կազմակերպության «2030 օրակարգ»-ի և կայուն զարգացման նպատակների[3] իրականացման Եվրոպական հանձնաժողովի ռազմավարության, և Նախագահ ֆոն դեր Լայենի քաղաքական ուղենիշներում[4] հայտարարված մյուս առաջնահերթությունների բաղկացուցիչ մասն է: «Կանաչ գործարք»-ի շրջանակներում Հանձնաժողովը վերաձևակերպելու է «Եվրոպական կիսամյակ»-ի մակրոտնտեսական համակարգման գործընթացը Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման նպատակներն ինտեգրելու, կայունությունը և քաղաքացիների բարեկեցությունը տնտեսական քաղաքականության առանցքում դնելու, ինչպես նաև՝ կայուն զարգացման նպատակները ԵՄ քաղաքականության մշակման և գործողությունների հիմքում դնելու նպատակով:

---

2 Համաձայն «Եվրոպական շրջակա միջավայր՝ 2020թ. վիճակը և հեռանկարները. կայուն Եվրոպայի անցման մասին» 2020թ. արդյունքների (Եվրոպական շրջակա միջավայրի գործակալություն)

3 https://sustainabledevelopment.un.org/post2015/transformingourworld

4 Տե՛ս ընտրված Նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի քաղաքական ուղեցույցները. Հաջորդ հանձնաժողովի քաղաքական ուղեցույցները (2019-2024 թթ.) – «Ավելիին ձգտող Եվրոպական միությունը. Իմ օրակարգը Եվրոպայի համար»

Ստորև ներկայացված նկարում պատկերված են «Կանաչ գործարք»-ի տարբեր բաղադրիչները:



Նկար 1. «Եվրոպական կանաչ գործարք»

2. ԵՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

2.1. Արմատապես վերափոխող քաղաքականությունների մշակում

«Եվրոպական կանաչ գործարք»-ը իրականացնելու համար անհրաժեշտ է վերանայել մաքուր էներգիայի մատակարարման քաղաքականությունը՝ տնտեսության, արդյունաբերության, արտադրության և սպառման, լայնածավալ ենթակառուցվածքների, տրանսպորտի, սննդի և գյուղատնտեսության, շինարարության, հարկերի և սոցիալական արտոնությունների ոլորտներում: Այս նպատակներին հասնելու համար կարևոր է բարձրացնել բնական էկոհամակարգերի պահպանության ու վերականգնման, ռեսուրսների կայուն օգտագործման և մարդու առողջության բարելավման բերված արժեքը: Հենց այստեղ է, որ վերափոխիչ փոփոխությունն ամենից շատ է անհրաժեշտ, և որն առավելագույն օգուտներ է պարունակում ԵՄ տնտեսության, հասարակության և բնական միջավայրի համար: ԵՄ-ն պետք է նաև խթանի և ներդրումներ իրականացնի անհրաժեշտ թվայնացման վերափոխման և գործիքների մեջ, քանի որ դրանք փոփոխությունների հիմնական խթաններն են:

Չնայած գործողության բոլոր այս ոլորտները խիստ փոխկապակցված են և փոխադարձաբար ամրապնդող, հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տնտեսական, բնապահպանական և սոցիալական նպատակների միջև հնարավոր փոխզիջումներին: «Կանաչ գործարք»-ը հետևողականորեն կօգտագործի քաղաքականության բոլոր լծակները՝ կարգավորում և ստանդարտացում, ներդրումներ և նորարարություններ, ազգային բարեփոխումներ, երկխոսություն սոցիալական գործընկերների հետ և միջազգային համագործակցություն: «Սոցիալական իրավունքների եվրոպական հենասյունը» կուղեղնշի գործողություններ՝ ապահովելու, որպեսզի ոչ ոք անտեսված չմնա:

Նոր միջոցներն ինքնին բավարար չեն «Եվրոպական կանաչ գործարք»-ի նպատակներին հասնելու համար: Ի հավելում նոր նախաձեռնությունների մեկնարկելուն, Հանձնաժողովը կաշխատի անդամ պետությունների հետ ակտիվացնելու ԵՄ ջանքերն ուղղված «Կանաչ գործարք»-ին վերաբերող գործող օրենսդրության ու քաղաքականության կիրարկմանը և արդյունավետ իրականացմանը:

2.1.1. ԵՄ կլիմայական հավակնության ավելացում 2030 և 2050 թվականների համար

Հանձնաժողովն արդեն նախանշել է հստակ տեսլական, թե ինչպես հասնել կլիմայական չեզոքության մինչև 2050 թվականը[5]: Այս տեսլականը պետք է հիմք հանդիսանա երկարաժամկետ ռազմավարության համար, որը ԵՄ-ն կներկայացնի ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի գրասենյակին 2020թ. սկզբին: Արդյունավետ և արդար անցման պայմանները հստակ սահմանելու, ներդրողների համար կանխատեսելիություն ապահովելու և վերափոխումն անշրջելի դարձնելու համար **Հանձնաժողովը մինչև 2020թ. մարտը կառաջարկի եվրոպական առաջին «Կլիմայի մասին» օրենքը:** Վերջինս օրենսդրության մեջ կամրագրի 2050 թվականի կլիմայական չեզոքության նպատակը: Կլիմայի մասին օրենքը նաև կապահովի, որ ԵՄ բոլոր քաղաքականությունները նպաստեն կլիմայական չեզոքության նպատակին և, որ բոլոր ոլորտներն իրենց դերակատարումն ունենան:

ԵՄ-ն արդեն սկսել է արդիականացնել և **վերափոխել տնտեսությունը՝ որպես նպատակ ունենալով կլիմայական չեզոքությունը:** 1990-2018 թվականների ընթացքում այն կրճատել է ջերմոցային գազերի արտանետումները 23%-ով, իսկ տնտեսությունն աճել է 61%-ով: Այնուամենայնիվ, ընթացիկ քաղաքականությունները մինչև 2050 թվականը միայն 60%-ով կնվազեցնեն ջերմոցային գազերի արտանետումները: Անելիքները շատ են՝ սկսած առաջիկա տասնամյակում կլիմայական ավելի հավակնոտ գործողություններից:

Մինչև 2020թ. ամառը Հանձնաժողովը կներկայացնի գնահատված ազդեցությամբ ծրագիրը՝ նպատակ ունենալով **ԵՄ-ի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման թիրախը 2030թ. համար բարձրացնելու առնվազն մինչև 50% և ձգտելու մինչև 55%-ի՝ 1990 թթ. արտանետումների մակարդակի հետ համեմատ:** Ջերմոցային գազերի արտանետումների այս լրացուցիչ կրճատումներն իրականացնելու նպատակով Հանձնաժողովը մինչև 2021թ. հունիսը կուսումնասիրի և, անհրաժեշտության դեպքում, կառաջարկի վերանայել կլիմայի հետ կապված

[5] Մաքուր մոլորակ բոլորի համար. Եվրոպական ռազմավարական երկարաժամկետ տեսլական՝ բարգավաճ, ժամանակակից, մրցակցային և կլիմայական տեսանկյունից չեզոք տնտեսության համար. COM (2018) 773

քաղաքականության համապատասխան բոլոր գործիքները: Այն կներառի Արտանետումների առևտրային համակարգը[6], ներառյալ եվրոպական արտանետումների առևտրի հնարավոր տարածումը նոր սեկտորների վրա, Արտանետումների առևտրի համակարգից դուրս գտնվող սեկտորներում արտանետումների նվազեցմանն ուղղված անդամ պետությունների թիրախները[7], և հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառային տնտեսության կանոնակարգը[8]: Հանձնաժողովը կառաջարկի փոփոխություններ կատարել Կլիմայի մասին օրենքում՝ այն համապատասխանաբար վերանայելու նպատակով:

Քաղաքականության այս բարեփոխումները կօգնեն ապահովել ածխածնի արդյունավետ գնագոյացում ամբողջ տնտեսության մեջ: Սա կխթանի սպառողական և բիզնես վարքագծի փոփոխությունները և կնպաստի հանրային և մասնավոր կայուն ներդրումների ավելացմանը: Գնային տարբեր գործիքները պետք է լրացնեն միմյանց և համատեղ ապահովեն քաղաքականության համահունչ շրջանակ: Անհրաժեշտ է նաև, որ հարկումը ևս համապատասխանեցվի կլիմայական նպատակներին: Հանձնաժողովը կառաջարկի վերանայել Էներգիայի հարկման մասին դիրեկտիվը[9]՝ կենտրոնանալով բնապահպանական խնդիրների վրա և առաջարկելով օգտագործել պայմանագրերի դրույթները, որոնք թույլ են տալիս Եվրոպական խորհրդարանին և Եվրոպական միության խորհրդին այս ոլորտի առաջարկությունները ընդունել սովորական օրենսդրական ընթացակարգով՝ որակյալ մեծամասնության, այլ ոչ թե՝ միաձայն քվեարկությամբ:

---

6 Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի 2003/87/EC դիրեկտիվի համահավաք տարբերակը, որը սահմանում է Եվրոպական համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների առևտրի թույլտվության սխեմա և փոփոխում է Խորհրդի 96/61/EC դիրեկտիվը

7 Կանոնակարգ (ԵՄ) 2018/842՝ անդամ պետությունների կողմից 2021-2030 թթ. ջերմոցային գազերի արտանետումների պարտադիր տարեկան նվազեցման մասին՝ նպաստելու կլիմայական գործողությունների միջոցով Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը և կանոնակարգ (ԵՄ) 525/2013-ը փոփոխելու մասին

8 Կանոնակարգ (ԵՄ) 2018/841՝ հողօգտագործումից, հողօգտագործման փոփոխությունից և անտառտնտեսությունից ջերմոցային ջազերի արտանետումները և կլանումները կլիմայի և էներգիայի 2030 թ. շրջանակում ներառելու մասին, և կանոնակարգ (ԵՄ) 525/2013-ում և 529/2013/ԵՄ որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

9 Եվրոպական միության խորհրդի 2003/96/ EC դիրեկտիվը վերաձևավորում է Եվրոպական համայնքի շրջանակները էներգետիկ արտադրանքի և էլեկտրաէներգայի հարկման համար

Քանի դեռ շատ միջազգային գործընկերներ չեն կիսում նույն հավակնությունը, ինչ ԵՄ-ն, կա ածխածնի արտահոսքի ռիսկ, կա՛մ այն պատճառով, որ արտադրությունը տեղափոխվում է ԵՄ-ից այլ՝ արտանետումների կրճատման ավելի ցածր հավակնություն ունեցող երկրներ, կա՛մ, որ ԵՄ արտադրանքը փոխարինվում է ավելի շատ ածխածնատար ներմուծումներով: Եթե այդ ռիսկը իրականանա, գլոբալ առումով արտանետումների կրճատում չի լինի, և դա կխափանի ԵՄ-ի և նրա ոլորտների ջանքերը՝ Փարիզյան համաձայնագրի գլոբալ կլիմայական նպատակներին հասնելու համար:

Եթե հավակնությունների մակարդակի տարբերությունները պահպանվեն ամբողջ աշխարհում, քանի որ ԵՄ-ն մեծացնում է իր կլիմայական հավակնությունները, **Հանձնաժողովը կառաջարկի ածխածնային սահմանագծի կարգավորման մեխանիզմ որոշակի սեկտորների համար՝ ածխածնի արտահոսքի ռիսկը նվազեցնելու նպատակով:** Սա կապահովի, որ ներմուծումների գինը ավելի ճշգրիտ արտացոլի դրանցում ածխածնի պարունակությունը: Այս միջոցառումը կմշակվի համաձայն Առևտրի համաշխարհային կազմակերպության կանոններին և ԵՄ այլ միջազգային պարտավորություններին: Դա այլընտրանք կլինի այն միջոցառումներին[10], որոնք վերաբերում են ԵՄ արտանետումների առևտրային համակարգում ածխածնի արտահոսքի ռիսկին:

Հանձնաժողովը կընդունի նոր, ավելի հավակնոտ ԵՄ ռազմավարություն կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ: Սա կարևոր է, քանի որ կլիմայի փոփոխությունը, չնայած մեղմման ջանքերին, կշարունակի զգալի ազդեցություն ունենալ Եվրոպայում: Կլիմայական դիմակայունության, կայունության ամրապնդման, կանխարգելման և պատրաստվածության ուղղությամբ ջանքերի ամրապնդումը առանցքային է: Կլիմայի փոփոխության հարմարվողականության ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակեն ազդել հանրային և մասնավոր ներդրումների, այդ թվում՝ բնության վրա հենված լուծումների վրա: Կարևոր է ապահովել, որ ԵՄ ամբողջ տարածքում ներդրողները, ապահովագրողները, բիզնեսները, քաղաքները և քաղաքացիները կարողանան մուտք ունենալ տվյալների բազա և մշակեն գործիքներ կլիմայի փոփոխությունն իրենց ռիսկերի կառավարման գործելակերպերում ինտեգրելու համար:

[10] Օրինակ՝ արտանետումների քվոտաների/չափաբաժինների անվճար հատկացումը, կամ էլեկտրաէներգիայի ծախսերի բարձրացման փոխհատուցումը

2.1.2. Մաքուր, մատչելի և անվտանգ էներգիայի մատակարարում

2030 և 2050 թվականներին կլիմայական նպատակներին հասնելու համար կարևոր է էներգետիկ համակարգի հետագա դեկարբոնիզացումը: Էներգիայի արտադրությունն ու օգտագործումը տնտեսական ոլորտներում կազմում են ԵՄ ջերմոցային գազերի արտանետումների ավելի քան 75%-ը: Առաջնահերթություն պետք է տրվի էներգաարդյունավետությանը: Պետք է ստեղծվի այնպիսի էներգետիկ ոլորտ, որը մեծապես հիմնված կլինի վերականգնվող աղբյուրների վրա՝ զուգահեռաբար արագացնելով ածխի օգտագործման դադարեցումը և գազի դեկարբոնիզացումը: Միևնույն ժամանակ, ԵՄ էներգիայի մատակարարումը պետք է լինի անվտանգ և մատչելի սպառողների և բիզնեսի համար: Որպեսզի սա իրականանա, անհրաժեշտ է ապահովել, որ եվրոպական էներգետիկ շուկան ամբողջությամբ ինտեգրված լինի, փոխկապակցված և թվայնացված՝ միևնույն ժամանակ պահպանելով տեխնոլոգիական չեզոքությունը:

Անդամ պետությունները կներկայացնեն իրենց վերանայված էներգետիկ և կլիմայական ծրագրերը մինչև 2019թ. ավարտը: Էներգետիկ միության կառավարման և կլիմայական գործողությունների մասին կանոնակարգին[11] համահունչ, այս ծրագրերը պետք է սահմանեն ԵՄ-ի համար նախատեսված թիրախներին համապատասխան հավակնոտ ազգային ներդրումներ: Հանձնաժողովը կգնահատի ծրագրերի հավակնությունները և, եթե հավակնությունների մակարդակը բավարար չլինի, նաև՝ լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտությունը: Սա կներառվի կլիմայական հավակնությունների ավելացման 2030 թ. գործընթացում, որի համար Հանձնաժողովը կուսումնասիրի և անհրաժեշտության դեպքում կառաջարկի վերանայել համապատասխան էներգետիկ օրենսդրությունը մինչև 2021 թվականի հունիսը: Երբ 2023 թ. անդամ պետությունները կսկսեն թարմացնել իրենց էներգետիկ և կլիմայական ազգային ծրագրերը, դրանք պետք է արտացոլեն կլիմայական նոր հավակնությունները: Հանձնաժողովը կշարունակի ապահովել բոլոր համապատասխան օրենսդրությունների խիստ կիրառումը:

[11] Էներգետիկ միության կառավարման և կլիմայի գործողությունների մասին կանոնակարգ (ԵՄ) 2018/1999

Մաքուր էներգիայի անցումը պետք է ներառի և օգուտ բերի սպառողներին: Վերականգնվող էներգիայի աղբյուրները էական դեր կունենան: Բաց ծովում քամու արտադրության ավելացումը էական նշանակություն կունենա՝ հիմնվելով անդամ պետությունների միջև տարածաշրջանային համագործակցության վրա: Վերականգնվող աղբյուրների, էներգաարդյունավետության և այլ կայուն լուծումների խելացի ոլորտային ինտեգրումը կօգնի հնարավորինս ցածր գնով հասնել դեկարբոնիզացման: Վերականգնվող աղբյուրների արժեքի արագ նվազումը, ինչպես նաև աջակցության քաղաքականության կատարելագործված ձևավորումը, արդեն իսկ նվազեցրել են տնային տնտեսությունների էներգիայի ծախսերը՝ ի հաշիվ վերականգնվող աղբյուրների ներդրման: Հանձնաժողովը մինչև 2020 թվականի կեսերը կներկայացնի միջոցառումներ, որոնք կօգնեն հասնել խելացի ինտեգրմանը: Զուգահեռաբար, գազի ոլորտում դեկարբոնիզացումը կարագացվի, այդ թվում՝ դեկարբոնիզացված գազերի արտադրմանն աջակցելու, դեկարբոնիզացված գազի մրցակցային շուկայի հեռանկարների ստեղծման միջոցով և էներգետիկ ոլորտից մեթանի արտանետումների խնդրի լուծմամբ:

Էներգետիկ աղքատության ռիսկը պետք է լուծվի այն տնային տնտեսությունների համար, որոնց նվազագույն կենսամակարդակի ապահովման համար հիմնական էներգետիկ ծառայությունները մատչելի չեն: Արդյունավետ ծրագրերը, ինչպիսիք են՝ տնային տնտեսություններին իրենց տների վերանորոգման ֆինանսավորման հատկացման սխեմաները, կարող են նվազեցնել էներգիայի ծախսերը և նպաստել շրջակա միջավայրի պահպանմանը: 2020թ. Հանձնաժողովը կստեղծի ուղեցույցներ, որոնք կօգնեն անդամ պետություններին լուծելու էներգետիկ աղքատության խնդիրը:

Կլիմայական չեզոքության անցումը պահանջում է նաև խելացի ենթակառուցվածքներ: Անդրսահմանային և տարածաշրջանային համագործակցության ամրապնդումը կնպաստի քաղել մաքուր էներգիային անցման օգուտները մատչելի գներով: Անհրաժեշտ կլինի վերանայել էներգետիկ ենթակառուցվածքների կարգավորող շրջանակը, այդ թվում՝ «TEN-E» կանոնակարգը[12]՝ կլիմայական չեզոքության նպատակին հետևողականություն ապահովելու համար: Այս շրջանակը պետք է խթանի նորարարական տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների կիրառումը, ինչպես

[12] Անդրեվրոպական ցանցեր. Էներգիայի (TEN-E) կանոնակարգ

օրինակ՝ խելացի էներգացանցերը, ջրածնային ցանցերը կամ ածխածնի կլանումը, պահպանումը և օգտագործումը, էներգիայի պահեստավորումը, ինչպես նաև՝ ոլորտի ինտեգրման խթանումը: Որոշ առկա ենթակառուցվածքներ և ակտիվներ կպահանջեն արդիականացում, որպեսզի ծառայեն նպատակին և դիմակայուն լինեն կլիմայական պայմանների նկատմամբ:

2.1.3. Արդյունաբերության մոբիլիզացում մաքուր և շրջանաձև տնտեսության համար

Կլիմայապես չեզոք և շրջանաձև տնտեսության հասնելը պահանջում է արդյունաբերության լիարժեք մոբիլիզացում: Արդյունաբերության ոլորտը և բոլոր արժեքային շղթաները վերափոխելու համար պահանջվում է 25 տարի՝ մի ամբողջ սերունդ: 2050 թվականին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է որոշումներ և գործողություններ ձեռնարկել առաջիկա հինգ տարիներին:

1970 թվականից մինչ 2017 թվականը նյութերի տարեկան գլոբալ արդյունահանումը եռապատկվել է և այն շարունակում է աճել[13]՝ առաջացնելով համաշխարհային մեծ ռիսկ: Ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների մոտ կեսը և կենսաբազմազանության կորստի և ջրի սակավության ավելի քան 90%-ը արդյունք է ռեսուրսների արդյունահանման և նյութերի, վառելիքի և սննդի արտադրության: ԵՄ արդյունաբերությունը սկսել է փոփոխությունը, բայց այնուհանդերձ կազմում է ԵՄ ջերմոցային գազերի արտանետումների 20%-ը: Այն շարունակում է մնալ չափազանց «գծային» և կախված է արդյունահանվող, փոխանակվող, վերամշակվող և ի վերջո որպես թափոն կամ արտանետում հանդիսացող նոր նյութերի թողունակությունից: Արդյունաբերության մեջ օգտագործվող նյութերի միայն 12%-ն է հանդիսանում վերամշակված[14]:

Անցումը հնարավորություն է ընդլայնելու կայուն և նոր աշխատատեղերի ապահովմամբ տնտեսական գործունեությունը: Համաշխարհային շուկաներում զգալի ներուժ կա ցածր արտանետումներով տեխնոլոգիաների, կայուն ապրանքների և ծառայությունների առումով: Նույն կերպ, շրջանաձև տնտեսությունը մեծ ներուժ է առաջարկում նոր գործունեության և աշ-

[13] Գլոբալ ռեսուրսների ակնարկ 2019. Բնական ռեսուրսներ մեր ուզած ապագայի համար. Ռեսուրսների հարցերով միջազգային փորձագիտական խումբ

[14] https://ec.europa.eu/eurostat/tgm/table.do?tab=table&init=1&language=en&pcode=cei_srm030&plugin=1

խատատեղերի համար: Այնուամենայնիվ, վերափոխումը տեղի է ունենում չափազանց դանդաղ տեմպերով. առաջընթացը ոչ համատարած է, ոչ էլ՝ միատարր: «Եվրոպական կանաչ գործարք»-ը կաջակցի և կարագացնի ԵՄ արդյունաբերության անցումը ներառական աճի կայուն մոդելի:

2020 թվականի մարտին Հանձնաժողովը կընդունի ԵՄ արդյունաբերական ռազմավարությունը՝ ուղղված կանաչ և թվային փոխակերպման երկակի մարտահրավերին: Եվրոպան պետք է օգտագործի թվային փոխակերպման ներուժը, որը «Կանաչ գործարք»-ի նպատակներին հասնելու հիմնական միջոցն է: Արդյունաբերական ռազմավարության հետ միասին, **շրջանաձև տնտեսության գործողությունների նոր ծրագիրը** կօգնի արդիականացնել ԵՄ-ի տնտեսությունը և օգտվել շրջանաձև տնտեսության հնարավորություններից ԵՄ տարածքում և համաշխարհային մակարդակում: Քաղաքականության նոր շրջանակի հիմնական նպատակը կլինի խթանել կլիմայապես չեզոք և շրջանաձև արտադրանքի առաջատար շուկաների զարգացումը ԵՄ-ում և ԵՄ-ից դուրս:

Էներգատար արդյունաբերության ճյուղերը, ինչպիսիք են՝ պողպատի, քիմիական նյութերի և ցեմենտի արտադրությունները, խիստ կարևոր են Եվրոպայի տնտեսության համար, քանի որ դրանք մատակարարում են մի քանի հիմնական արժեքային շղթաներ:

Այս ոլորտների դեկարբոնիզացումը և արդիականացումը կարևոր են: Էներգատար արդյունաբերությունների բարձր մակարդակի խմբի կողմից հրապարակված առաջարկությունները ցույց են տալիս արդյունաբերության հանձնառությունն այդ նպատակներին[15]:

Շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիրը կներառի «կայուն արտադրանք»-ի քաղաքականություն, որն աջակցում է բոլոր ապրանքների շրջանաձև ձևավորմանը՝ հիմնված ընդհանուր մեթոդաբանության և սկզբունքների վրա: Այն առաջնահերթ կդարձնի նյութերի կրճատումը և կրկնակի օգտագործումը նախքան դրանց վերամշակումը: Այն կխթանի նոր բիզնես մոդելները և կսահմանի նվազագույն պահանջներ կանխելու էկոլոգիապես վնասակար արտադրանքների շրջանառումը ԵՄ շուկայում: Կխստացվի նաև արտադրողի ընդլայնված պատասխանատվության դաշտը:

[15] https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_19_6353

Չնայած շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիրը կուղղորդի բոլոր ոլորտների վերափոխումը, **գործողությունները հիմնականում կկենտրոնանան ռեսուրսատար ոլորտների վրա, ինչպիսիք են՝ տեքստիլ, շինարարությունը, էլեկտրոնիկայի և պլաստիկի արտադրությունները:** Հանձնաժողովը հետևելու է 2018 թ. պլաստիկի ռազմավարությանը, որը, ի թիվս այլ բաների, կենտրոնացած է միտումնավոր ավելացված միկրոպլաստիկների և պլաստիկի ոչ միտումնավոր, օրինակ՝ տեքստիլից և անվադողերի քայքայումից առաջացող արտանետումների դեմ պայքարի միջոցների վրա: Հանձնաժողովը կմշակի պահանջներ, որպեսզի մինչև 2030 թվականը ապահովի, որ ԵՄ շուկայում բոլոր փաթեթավորումները բազմակի օգտագործվեն կամ վերամշակվեն տնտեսապես կայուն եղանակով, կմշակվի կենսաքայքայվող և կենսաբանական հիմքով պլաստիկների կանոնակարգ և կիրականացնեն միջոցառումներ մեկանգամյա օգտագործման պլաստիկների վերաբերյալ:

Շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիրը ներառում է նաև **միջոցառումներ խրախուսելու բիզնեսներին առաջարկելու և թույլ տալու սպառողներին ընտրել բազմակի օգտագործման, դիմացկուն և վերանորոգվող ապրանքներ:** Այն վերլուծելու է «նորոգման իրավունքի» անհրաժեշտությունը և զսպելու է սարքերի ներկառուցված բարոյական մաշվածքը, մասնավորապես՝ էլեկտրոնիկայի համար: Սպառողական քաղաքականությունը հնարավորություն կտա սպառողներին կատարել տեղեկացված ընտրություն և ակտիվ դեր խաղալ էկոլոգիական անցման գործընթացում: Նոր բիզնես մոդելները, որոնք հիմնված են ապրանքների և ծառայությունների վարձակալության և տարածման վրա, դեր կխաղան, քանի դեռ դրանք իսկապես կայուն են և մատչելի:

Վստահելի, համադրելի և ստուգելի տեղեկատվությունը նույնպես կարևոր դեր ունի գնորդներին ավելի կայուն որոշումներ կայացնելու հարցում և նվազեցնում է «կանաչ լվացման» ռիսկը: «Կանաչ պահանջներ» ներկայացնող ընկերությունները պետք է հիմնավորեն դրանք՝ համեմատելով ստանդարտ մեթոդաբանության հետ՝ շրջակա միջավայրի վրա վերջինիս ազդեցությունը գնահատելու համար: Հանձնաժողովը կուժեղացնի իր կարգավորիչ և ոչ-կարգավորիչ ջանքերը կեղծ կանաչ պահանջների դեմ պայքարելու համար: Թվայնացումը կարող է նաև օգնել բարելավել ԵՄ-ում վաճառվող ապրանքների բնութագրերի վերա-

բերյալ տեղեկատվության հասանելիությունը: Օրինակ՝ էլեկտրոնային արտադրանքի անձնագրերում կարող են տեղեկություններ տրամադրվել ապրանքի ծագման, կազմի, վերանորոգման և ապամոնտաժման հնարավորությունների և գործառնության ժամկետի ավարտից հետո դրանց վերամշակման վերաբերյալ: Պետական մարմինները, ներառյալ՝ ԵՄ հաստատությունները, պետք է օրինակ ծառայեն և վստահեցնեն, որ այդ գնումները կանաչ են: Հանձնաժողովը կառաջարկի հետագա օրենսդրություն և ուղեցույց կանաչ հանրային գնումների վերաբերյալ:

Կայուն ապրանքների քաղաքականությունը նաև ներուժ ունի զգալիորեն կրճատելու թափոնները: Այնտեղ, որտեղ հնարավոր չէ խուսափել թափոններից, պետք է վերականգնել տնտեսական արժեքը և խուսափել կամ նվազագույնի հասցնել ազդեցությունը շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության վրա: Սա պահանջում է նոր օրենսդրություն, ներառյալ՝ թիրախներ ու միջոցներ՝ պայքարելու բազմակի փաթեթավորման և թափոնների առաջացման դեմ: Չուգահեռաբար, ԵՄ ընկերությունները պետք է օգտվեն երկրորդային հումքի և ենթամթերքի կայուն և ինտեգրված միասնական շուկայից: Սա պահանջում է ավելի սերտ համագործակցություն արժեքային շղթաների միջև, ինչպես՝ «Շրջանաձև պլաստիկի մասին դաշինք»-ի դեպքում: Հանձնաժողովը կքննարկի պարտադիր վերամշակված պարունակությամբ երկրորդային հումքի շուկան խթանելու օրենսդրական պահանջները (օրինակ՝ փաթեթավորման, տրանսպորտային միջոցների, շինանյութերի և մարտկոցների համար): Քաղաքացիների համար թափոնների կառավարումը պարզեցնելու և բիզնեսի համար ավելի մաքուր երկրորդային նյութեր ապահովելու նպատակով հանձնաժողովը նաև կառաջարկի թափոնների առանձին հավաքագրման ԵՄ մոդել: Հանձնաժողովը կարծում է, որ ԵՄ-ն պետք է դադարեցնի իր թափոնների արտահանումը ԵՄ-ից դուրս և, հետևաբար, կվերանայի թափոնների տեղափոխման և ապօրինի արտահանման կանոնները:

Ռեսուրսների հասանելիությունը նաև ռազմավարական անվտանգության հարց է «Կանաչ գործարք»-ը կյանքի կոչելու Եվրոպայի հավակնության համար: Կայուն հումքի, մասնավորապես՝ մաքուր տեխնոլոգիաների, թվային, տիեզերական և պաշտպանական տեխնոլոգիաների համար անհրաժեշտ կարևորագույն հումքի մատակարարման ապահովումը, տարանջատելով առաջնային և երկրորդական աղբյուրներից մատակարարում-

ները, այս անցումն իրականացնելու նախապայմաններից մեկն է դառնում:

ԵՄ արդյունաբերությանն անհրաժեշտ են «կլիմայի և ռեսուրսների առաջատարներ»՝ մինչև 2030 թվականը նորարարական տեխնոլոգիաների առաջին առևտրային կիրառությունները հիմնական արդյունաբերական ճյուղերում զարգացնելու համար: Գերակա ուղղությունները ներառում են մաքուր ջրածինը, վառելիքային էլեմենտները և այլ այլընտրանքային վառելիք, էներգիայի կուտակումը և ածխածնի որսումը, պահպանումը և օգտագործումը: Որպես օրինակ, Հանձնաժողովը կաջակցի մաքուր պողպատի ստացման առաջադեմ տեխնոլոգիաներին, որոնք մինչև 2030 թվականը կհանգեցնեն պողպատի զրո-ածխածնով արտադրության գործընթացին և կպարզի, արդյոք կարող է օգտագործվել «Եվրոպական ածխի և պողպատի համայնք»-ի ներքո իրացվող ֆինանսավորման մի մասը: Ավելի լայն իմաստով՝ ԵՄ արտանետումների առևտրի համակարգի նորարարության հիմնադրամը կաջակցի գործարկել նման մասշտաբային նորարարական նախագծեր:

Արդյունաբերության հետ համագործակցության նոր ձևերի խթանումը և ռազմավարական արժեքային շղթաներում ներդրումների կատարումը կարևոր են: Հանձնաժողովը կշարունակի իրականացնել «Մարտկոցների ռազմավարական գործողությունների ծրագիր»-ը և աջակցել «Մարտկոցների եվրոպական դաշինք»-ին: Հանձնաժողովը 2020 թվականին օրենսդրություն կառաջարկի ապահովելու անվտանգ, շրջանաձև և կայուն մարտկոցների արժեքային շղթա բոլոր տեսակի մարտկոցների համար՝ ներառյալ մարտկոցների մատակարարում էլեկտրական մեքենաների զարգացող շուկայի համար: Հանձնաժողովը նաև կաջակցի դաշինքների և ռեսուրսների լայնամասշտաբ հավաքագրմանն ուղղված այլ նախաձեռնություններին, օրինակ՝ Եվրոպական ընդհանուր շահերի կարևոր նախագծերի տեսքով, որտեղ սահմանված ժամկետներում թիրախային պետական օգնությամբ հնարավոր է ստեղծել նորարարական արժեքային շղթաներ:

Տարբեր ոլորտներում «Կանաչ գործարք»-ի կայունության նպատակներին հասնելու կարևորագույն օժանդակ միջոցներից են թվային տեխնոլոգիաները: Հանձնաժողովը միջոցներ կփնտրի՝ ապահովելու, որ թվային տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝ արհեստական բանականությունը, 5G-ն, ամպային և եզրային համակարգչային տեխնոլոգիան և իրերի ինտերնետը, կարող են

արագացնել և առավելագույնի հասցնել կլիմայի փոփոխության դեմ պայքարը և շրջակա միջավայրը պահպանելու քաղաքականության ազդեցությունը: Թվայնացումը նոր հնարավորություններ է ի հայտ բերում՝ օդի և ջրի աղտոտվածության հեռահար մոնիթորինգի կամ էներգիայի և բնական ռեսուրսների օգտագործման վերահսկման և օպտիմալացման համար: Միևնույն ժամանակ, Եվրոպային անհրաժեշտ է թվային սեկտոր, որն իր հիմքում դնում է կայունությունը: Հանձնաժողովը նաև կքննարկի ոլորտի էներգաարդյունավետության և շրջանաձև տնտեսության գործունեության բարելավման միջոցառումները՝ լայնաշերտ ցանցերից մինչև տվյալների կենտրոններ և ՏՀՏ սարքեր: Հանձնաժողովը կգնահատի էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության առավել թափանցիկության, նոր ցանցեր տեղակայելիս առավել խիստ միջոցառումների կարիքը, ինչպես նաև «հետ վերցնելու» սխեմաներին աջակցության առավելությունները՝ խթանելու համար, որ մարդիկ վերադարձնեն իրենց անցանկալի սարքերը, ինչպիսիք են բջջային հեռախոսները, պլանշետները և լիցքավորող սարքերը:

2.1.4. Կառուցել և վերանորոգել էներգաարդյունավետ և ռեսուրսաարդյունավետ մոտեցմամբ

Շենքերի կառուցումը, օգտագործումը և վերանորոգումը պահանջում են զգալի քանակությամբ էներգիա և հանքային ռեսուրսներ (օրինակ՝ ավազ, մանրախիճ, ցեմենտ): Շենքերում է նաև սպառվում էներգիայի 40%-ը: Այսօր շենքային ֆոնդի տարեկան վերանորոգման տեմպը անդամ պետություններում տատանվում է 0,4-ից մինչև 1,2%: ԵՄ-ի էներգաարդյունավետության և կլիմայի նպատակներին հասնելու համար այս ցուցանիշը պետք է առնվազն կրկնապատկվի: Զուգահեռաբար, 50 միլիոն սպառող քայլեր է ձեռնարկում իրենց տները բավարար տաք պահելու համար:

Էներգախնայողության և մատչելիության երկակի մարտահրավերը լուծելու համար ԵՄ-ն և անդամ պետությունները պետք է **ներգրավվեն հանրային և մասնավոր շենքերի «վերանորոգման ալիքի» մեջ:** Չնայած վերանորոգման տեմպերի բարձրացումը մարտահրավեր է, վերանորոգումը նվազեցնում է էներգիայի վճարները և կարող է նվազեցնել էներգետիկ աղքատությունը: Այն կարող է նաև խթանել շինարարության ոլորտը և աջակցել ՓՄՁ-ներին, ստեղծել աշխատատեղեր տեղական շուկայում:

Հանձնաժողովը խստորեն **կիրականացնի շենքերի էներգետիկ կատարողականի հետ կապված օրենսդրությունը:** Այն կմեկնարկի 2020 թվականին անդամ պետությունների «Վերանորոգման ազգային երկարաժամկետ ռազմավարության»[16] գնահատմամբ: Հանձնաժողովը նաև աշխատանքներ է սկսելու շենքերի արտանետումները եվրոպական արտանետումների առևտրի մեջ ներառելու հնարավորության վերաբերյալ՝ ապահովելու, որ էներգիայի տարբեր աղբյուրների հարաբերական գները ճիշտ ազդակներ տրամադրեն էներգաարդյունավետության համար: Բացի այդ, Հանձնաժողովը կվերանայի «Շինարարական ապրանքների կանոնակարգը»[17]: Այն պետք է ապահովի, որ բոլոր փուլերում նոր և վերանորոգված շենքերի նախագծումը համահունչ լինի շրջանաձև տնտեսության կարիքներին և հանգեցնի շենքային ֆոնդի թվայնացման և կլիմայապես դիմակայունության ավելացմանը:

Զուգահեռաբար Հանձնաժողովն առաջարկում է շահագրգիռ կողմերի հետ աշխատել 2020 թվականին հիմնանորոգման նոր նախաձեռնության վրա: Սա կներառի բաց հարթակ, որը կմիավորի շենքերի և շինարարության ոլորտը, ճարտարապետներին ու ինժեներներին և տեղական իշխանություններին՝ լուծելու խոչընդոտները: Այս նախաձեռնությունը կներառի նաև «Invest EU»-ի ներքո ֆինանսավորվող նորարարական սխեմաները: Այս կերպ կարելի է ներգրավվել բնակարանային ասոցիացիաներին կամ էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություններին, որոնք կարող են սկսել վերանորոգման գործընթացը, այդ թվում՝ էներգասպառման պայմանագրերի կնքման միջոցով: Էական նպատակներից կլինի վերանորոգման ջանքերի կազմակերպումը ավելի մեծ բլոկներում՝ օգտվելու ֆինանսավորման ավելի լավ պայմաններից և մասշտաբից տնտեսումից: Հանձնաժողովը կաշխատի նաև վերացնել ազգային կարգավորիչ խոչընդոտները, որոնք խոչընդոտում են էներգախնայողության ներդրումները վարձակալած և բազմաբնակարան շենքերում: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվելու սոցիալական բնակարանների ֆոնդի նորոգմանը՝ օգնելու այն տնային տնտեսություններին, որոնք դժվարանում են վճարել իրենց էներգիայի ծախսերի դիմաց: Պետք է կենտրոնանալ նաև դպրոցների և հիվանդանոցների վերանորոգման վրա, քանի

[16] Շենքերի էներգաարդյունավետության մասին դիրեկտիվի պահանջների ներքո

[17] Կանոնակարգ (ԵՄ) 305/2011, որը սահմանում է շինարարական ապրանքների շուկայավարման համար ներդաշնակեցված պայմաններ և չեղյալ է հայտարարում Եվրոպական միության խորհրդի 89/106/EEC դիրեկտիվը

որ շենքի էներգաարդյունավետության շնորհիվ խնայվող գումարը կծախսվի կրթության և հանրային առողջության պահպանման համար:

2.1.5. Արագացնելով անցումը դեպի կայուն և խելացի տրանսպորտի

Տրանսպորտը կազմում է ԵՄ ջերմոցային գազերի արտանետումների մեկ քառորդ մասը, որը շարունակում է աճել: Կլիմայական չեզոքությանը հասնելու համար անհրաժեշտ է տրանսպորտային արտանետումների 90%-ով կրճատում մինչև 2050 թվականը: Ճանապարհային, երկաթուղային, ավիացիոն և ջրային տրանսպորտի միջոցները պետք է նպաստեն արտանետումների կրճատմանը: Տրանսպորտի կայուն զարգացումը նշանակում է, որ դրանից օգտվողները պետք է առաջին տեղում լինեն՝ առաջարկելով նրանց ավելի մատչելի, առողջարար և ավելի մաքուր այլընտրանքային միջոցներ ներկայումս օգտագործվող տեսակների փոխարեն: Հանձնաժողովը 2020 թվականին ընդունելու է կայուն և խելացի տրանսպորտային ռազմավարություն, որը կլուծի այս մարտահրավերը և կանդրադառնա արտանետումների բոլոր աղբյուրներին:

Կարիք կա մեծապես խթանել բազմամոդել տրանսպորտը: Դա կբարձրացնի տրանսպորտային համակարգի արդյունավետությունը: Որպես առաջնահերթություն՝ այսօր ներքին բեռնափոխադրումների 75%-ի զգալի մասը պետք է տեղափոխվի երկաթուղային և ներքին ջրային ուղիներ: Դա կպահանջի միջոցներ ավելի լավ կառավարելու և մեծացնելու երկաթուղիների և ներքին ջրատարների կարողությունները, ինչը Հանձնաժողովը կառաջարկի մինչև 2021 թվականը: Հանձնաժողովը կքննարկի նաև չեղարկելու և նոր առաջարկ ներկայացնելու Համալիր տրանսպորտային դիրեկտիվի[18] վերանայման համար, որպեսզի այն դառնա երկաթուղային և ջրային փոխադրումների, այդ թվում՝ կարճատև ծովային փոխադրումների ներգրավմամբ բազմամոդել բեռնափոխադրումների գործարկմանն օժանդակող արդյունավետ գործիք: Ավիացիայում, իրապես «Միասնական եվրոպական երկնքի» վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկի ընդունման աշխատանքնե-

[18] 92/106/EEC դիրեկտիվում փոփոխություն կատարելու մասին դիրեկտիվի առաջարկ՝ անդամ պետությունների միջև ապրանքների համակցված փոխադրման որոշակի տեսակների ընդհանուր կանոններ սահմանելու մասին COM(2017)648

ը պետք է վերսկսվեն, քանի որ դա կօգնի հասնել ավիացիոն արտանետումների զգալի կրճատումների:

Ավտոմատացված և փոխկապված բազմամոդել տրանսպորտը թվայնացված խելացի երթևեկի կառավարման համակարգերի հետ միասին կարևոր դեր կխաղա: ԵՄ տրանսպորտային համակարգն ու ենթակառուցվածքը հարմարեցված կլինեն աջակցելու տրանսպորտային նոր ծառայություններին, որոնք կարող են նվազեցնել խցանումներն ու աղտոտումը, հատկապես քաղաքային բնակավայրերում: Հանձնաժողովը կօգնի զարգացնել երթևեկության կառավարման և «Տրանսպորտը որպես ծառայություն» լուծումների խելացի համակարգեր իր ֆինանսավորման գործիքների միջոցով, ինչպիսին է «Փոխկապված Եվրոպա» կառույցը:

Տրանսպորտի գինը պետք է արտացոլի այն ազդեցությունը, որը վերջինս ունի շրջակա միջավայրի և առողջության վրա: Հանածո վառելիքի սուբսիդիաները պետք է վերացվեն, և Էներգիայի հարկման մասին դիրեկտիվի վերանայման համատեքստում Հանձնաժողովը մանրազնին կքննի ներկայիս հարկային արտոնությունները, ներառյալ ավիացիայի և ծովային վառելիքի համար, և բոլոր բացերի արդյունավետ լրացումը: Նմանապես, Հանձնաժողովը կառաջարկի ընդլայնել Արտանետումների եվրոպական առևտուրը ծովային հատվածի վրա և կրճատել ավիաընկերություններին անվճար հատկացված արտանետումների առևտրի համակարգի թույլտվությունները: Այն կհամակարգվի գլոբալ մակարդակի գործողությունների միջոցով, մասնավորապես՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում և Ծովային միջազգային կազմակերպությունում: Հանձնաժողովը կդիտարկի նաև քաղաքական նոր նկատառում, թե ինչպես հասնել ԵՄ-ում ճանապարհային արդյունավետ գնագոյացման: Այն Եվրոպական խորհրդարանին և Եվրոպական միության խորհրդին կոչ է անում պահպանել հավակնությունների բարձր մակարդակը Հանձնաժողովի «Eurovignette» դիրեկտիվի[19] նախնական առաջարկի մեջ, և անհրաժեշտության դեպքում պատրաստ է հետ վերցնել այն և առաջարկել այլընտրանքային միջոցներ:

ԵՄ-ն զուգահեռաբար **պետք է ուժեղացնի կայուն այլընտրանքային տրանսպորտային վառելիքների արտադրությունն**

[19] 999/62/EC դիրեկտիվում փոփոխություն կատարելու մասին դիրեկտիվի առաջարկ COM(2017) 275 տուգանելու որոշակի ենթակառուցվածքների օգտագործման համար ծանր բեռնատար մեքենաներին

ու օգտագործումը: Մինչև 2025 թվականը եվրոպական ճանապարհներին սպասվող 13 միլիոն զրոյական և ցածր արտանետումներով մեքենաների համար անհրաժեշտ կլինի շուրջ 1 միլիոն հանրային վերալիցքավորման և լիցքավորման կայաններ: Հանձնաժողովը կաջակցի վերալիցքավորման և վառելիքի լիցքավորման հանրային կետերի տեղակայմանը, որտեղ առկա են շարունակական բացեր, հատկապես՝ հեռավոր ճանապարհորդությունների և ոչ խիտ բնակեցված տարածքներում, և հնարավորինս արագ հանդես կգա դրա աջակցությանն ուղղված ֆինանսավորման նոր կոչով: Հանձնաժողովը նաև կվերանայի վառելիքի այլընտրանքային ենթակառուցվածքների մասին դիրեկտիվը[20] և TEN T կանոնակարգը՝ զրոյական և ցածր արտանետում ունեցող մեքենաների և նավերի գործարկման գործընթացն արագացնելու համար:

Տրանսպորտը պետք է դառնա կտրականապես նվազ աղտոտող, հատկապես՝ քաղաքներում: Միջոցառումների համադրությունը պետք է վերաբերի արտանետումներին, քաղաքային խցանումներին և բարելավված հասարակական տրանսպորտին: Ներքին այրման շարժիչով փոխադրամիջոցների համար Հանձնաժողովը կառաջարկի օդի աղտոտիչների արտանետումների ավելի խիստ ստանդարտներ: Հանձնաժողովը կառաջարկի նաև մինչև 2021 թվականի հունիսը վերանայել ավտոմոբիլների և միկրոավտոբուսների համար ածխաթթու գազի արտանետումների ստանդարտների մասին օրենսդրությունը, որպեսզի ապահովվի հստակ ուղի 2025 թվականից անցնելու դեպի զրոյական արտանետումներով տրանսպորտի: Զուգահեռաբար, Հանձնաժողովը կդիտարկի ճանապարհային տրանսպորտի նկատմամբ «Արտանետումների եվրոպական առևտրի» կիրառումը՝ որպես փոխադրամիջոցների համար առկա և ապագա CO_2 արտանետումների ստանդարտների լրացում: Հանձնաժողովը միջոցներ կձեռնարկի ծովային տրանսպորտի հետ կապված, ներառյալ՝ առավել աղտոտող նավերի մուտքի կարգավորումը ԵՄ նավահանգիստներ և կայանված նավերին ափամերձ էլեկտրականությունն օգտագործելու պարտավորեցում: Նույն կերպ, օդանավակայանների մոտ պետք է բարելավվի օդի որակը՝ պայքարելով ինքնաթիռների և օդանավակայանների գործունեությունից առաջացող աղտոտիչ արտանետումների դեմ:

[20] 2014/94/ԵՄ դիրեկտիվ՝ այլընտրանքային վառելիքի ենթակառուցվածքների գործարկման մասին

2.1.6. Ֆերմայից սեղան. արդար, առողջ և էկոլոգիապես մաքուր պարենային համակարգի ձևավորում

Եվրոպական սնունդը հայտնի է որպես անվտանգ, սննդարար և որակյալ: Այն այժմ պետք է նաև դառնա **կայունության գլոբալ չափանիշ**: Չնայած անցումը դեպի ավելի կայուն համակարգեր մեկնարկել է, սակայն աշխարհի արագ աճող բնակչության կերակրումը մնում է մարտահրավեր ներկայիս արտադրական օրինաչափություններին զուգահեռ: Սննդամթերքի արտադրությունը դեռևս հանգեցնում է օդի, ջրի և հողի աղտոտմանը, նպաստում է կենսաբազմազանության կորստին և կլիմայի փոփոխությանը, ինչպես նաև՝ սպառում է չափազանց մեծ քանակությամբ բնական ռեսուրսներ, մինչդեռ սննդամթերքի մեծ մասը ծախսվում է ապարդյուն: Միևնույն ժամանակ, ցածրորակ սննդակարգերը նպաստում են գիրությանը և այնպիսի հիվանդությունների առաջացմանը, ինչպիսիք են՝ քաղցկեղը:

Սննդի արժեշղթաներում բոլոր օպերատորների համար նոր հնարավորություններ կան: Նոր տեխնոլոգիաներն ու գիտական հայտնագործությունները, որոնք զուգորդվում են հասարակության իրազեկության բարձրացման և կայուն սննդամթերքի պահանջարկի հետ, օգուտ կտան բոլոր շահագրգիռ կողմերին: Հանձնաժողովը 2020 թ. գարնանը կներկայացնի «Ֆերմայից սեղան» ռազմավարությունը և կմեկնարկի շահագրգիռ կողմերի լայն քննարկումը, որն ընդգրկելու է սննդի շղթայի բոլոր փուլերը և ճանապարհ է հարթելու ավելի կայուն սննդի քաղաքականության ձևավորման համար:

Եվրոպացի ֆերմերներն ու ձկնորսները առանցքային նշանակություն ունեն այս վերափոխման կառավարման հարցում: «Ֆերմայից սեղան» ռազմավարությունը կամրապնդի նրանց ջանքերը կլիմայի փոփոխության դեմ պայքարի, շրջակա միջավայրի պաշտպանության և կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ: Գյուղատնտեսության և ձկնորսության ընդհանուր քաղաքականությունները կմնան առանցքային գործիքներ այդ ջանքերը սատարելու համար՝ միևնույն ժամանակ ապահովելով ֆերմերների, ձկնորսների և նրանց ընտանիքների արժանապատիվ ապրուստը: Հանձնաժողովի առաջարկությունները 2021-2027 թվականների գյուղատնտեսության ընդհանուր քաղաքականության վերաբերյալ սահմանում են, որ այդ քաղաքականության ընդհանուր բյուջեի առնվազն 40%-ը և ծովային

Ձկնորսության ֆոնդի առնվազն 30%-ը կուղղվեն կլիմայական գործողություններին:

Հանձնաժողովը կհամագործակցի Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի հետ՝ **առաջարկություններում հասնելու առնվազն այս հավակնության մակարդակին:** Հաշվի առնելով, որ վերանայված գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականության մեկնարկն ամենայն հավանականությամբ կհետաձգվի մինչև 2022 թվականը, Հանձնաժողովը կաշխատի անդամ պետությունների և շահագրգիռ կողմերի հետ ապահովելու, որ գյուղատնտեսության ազգային ռազմավարական ծրագրերն ի սկզբանե ամբողջությամբ արտացոլեն «Կանաչ գործարք»-ի և «Ֆերմայից սեղան» ռազմավարության հավակնությունները: Հանձնաժողովը կապահովի, որ այդ ռազմավարական ծրագրերը գնահատվեն կլիմայական և բնապահպանական կայուն չափանիշների համաձայն: Այս ծրագրերը պետք է հանգեցնեն կայուն գործելակերպերի՝ ինչպես օրինակ՝ ճշգրիտ գյուղատնտեսության, օրգանական հողագործության, ագրոէկոլոգիայի, ագրոանտառային տնտեսության և կենդանիների պաշտպանության խստագույն չափանիշների կիրառմանը: Շեշտադրումը պահպանումից դեպի արդյունավետություն փոխելով այնպիսի միջոցներով, ինչպիսին են էկոսխեմաները, ֆերմերները պետք է խրախուսվեն բնապահպանական տեսանկյունից անվտանգ և կլիմայանպաստ գործունեության, ներառյալ՝ հողում ածխածնի կառավարման և պահպանման, ինչպես նաև՝ սննդարար նյութերի բարելավված կառավարմանը ուղղված ջրի որակի լավացմանն ու արտանետումների նվազեցման համար: Հանձնաժողովը կհամագործակցի անդամ պետությունների հետ զարգացնելու կայուն ծովամթերքի ներուժը՝ որպես ցածր ածխածնային սննդի աղբյուր:

Ռազմավարական ծրագրերը պետք է արտացոլեն հավակնությունների բարձր մակարդակը՝ զգալիորեն նվազեցնելու թունաքիմիկատների, ինչպես նաև՝ պարարտանյութերի և հակաբիոտիկների օգտագործումը: Հանձնաժողովը կբացահայտի այն միջոցառումները, ներառյալ օրենսդրական, որոնք անհրաժեշտ են այդ կրճատումներն իրականացնելու համար՝ հիմնվելով շահագրգիռ կողմերի երկխոսության վրա: Եվրոպայում օրգանական հողագործության նպատակով օգտագործվող տարածքները պետք է ավելանան: ԵՄ-ն պետք է մշակի վնասատուներից և հիվանդություններից բերքը պաշտպանելու նորարարական եղանակներ և դիտարկի պարենային համակարգի կայունութ-

յան բարելավման համար նորարարական լուծումների հնարավոր դերը՝ միաժամանակ ապահովելով, որ այդ լուծումները լինեն անվտանգ:

«Ֆերմայից սեղան» ռազմավարությունը նույնպես կնպաստի շրջանաձև տնտեսության զարգացմանը: Այն նպատակաուղղված կլինի նվազեցնելու սննդամթերքի վերամշակման և մանրածախ ոլորտների շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ միջոցներ ձեռնարկելով տրանսպորտի, պահեստավորման, փաթեթավորման և սննդային թափոնների ուղղությամբ: Այն կներառի սննդամթերքի հետ կապված խարդախության դեմ պայքարի գործողություններ, ներառյալ՝ ԵՄ-ում հարկադիր կատարման և հետաքննության կարողությունների ամրապնդումը և կսկսի նորարարական սննդամթերքի և կերային մթերքների, ինչպես օրինակ՝ ջրիմուռների հիմքով ծովամթերքների առաջխաղացման գործընթացը:

Ի վերջո, «Ֆերմայից սեղան» ռազմավարությունը կնգտի **խթանել սննդի կայուն սպառումը և խթանել մատչելի, առողջ սնունդ բոլորի համար:** Ներմուծվող սնունդը, որը չի համապատասխանում ԵՄ համապատասխան բնապահպանական չափանիշներին, չի թույլատրվում ԵՄ շուկաներում: Հանձնաժողովը կառաջարկի գործողություններ, որոնք կօգնեն սպառողներին ընտրել առողջ և կայուն սննդակարգեր և նվազեցնել սննդային թափոնները: Հանձնաժողովը կուսումնասիրի սպառողներին նոր, այդ թվում՝ թվային եղանակով, լավագույնս տեղեկատվություն տրամադրել այնպիսի մանրամասների վերաբերյալ, ինչպիսիք են՝ սննդի ծագման վայրը, սննդային արժեքը և շրջակա միջավայրի վրա թողած ազդեցությունը: «Ֆերմայից սեղան» ռազմավարությունը ընդգրկում է նաև առաջարկներ ֆերմերների դիրքը արժեքային շղթայում բարելավելու մասին:

2.1.7. Էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանում և վերականգնում

Էկոհամակարգերը պատասխանատու են այնպիսի կենսական կարիքների համար, ինչպիսիք են սնունդը, քաղցրահամ ջուրը, մաքուր օդը և ապաստանը: Էկոհամակարգերը մեղմում են բնական աղետների, վնասատուների և հիվանդությունների հետևանքները և օգնում կարգավորել կլիման: Այնուամենայնիվ, ԵՄ-ն չի կատարում 2020 թ. իր ամենակարևոր բնապահպանական նպատակները, այն է՝ «Կենսաբազմազանության

մասին» կոնվենցիայով նախատեսված Աիչիի թիրախները: ԵՄ-ն և նրա համաշխարհային գործընկերները պետք է կանգնեցնեն կենսաբազմազանության կորուստը: Կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտական քաղաքականության պլատֆորմի 2019 թվականի գլոբալ գնահատման զեկույցում[21] կենսաբազմազանության համաշխարհային քայքայումը, որն առաջացել է հիմնականում հողերի և ծովերի օգտագործման փոփոխությունների, բնական ռեսուրսների ուղղակի շահագործման և կենսաբազմազանության կորստի երրորդ ամենակարևոր շարժառիթի՝ կլիմայի փոփոխության հետևանքով:

2020 թվականի հոկտեմբերին Չինաստանի Կունմինգ քաղաքում անցկացված «**Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի կողմ երկրների համաժողովը** հնարավորություն ընձեռեց աշխարհին ստեղծելու կենսաբազմազանության կորստի կասեցման գլոբալ կայուն շրջանակ: ԵՄ-ի առանցքային դերակատարումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը **մինչև 2020 թ. մարտը** կներկայացնի **Կենսաբազմազանության ռազմավարությունը**, որին կհաջորդեն 2021 թ. հատուկ գործողությունները: Ռազմավարությունը նախանշելու է ԵՄ դիրքորոշումը համաժողովի կողմերի համար՝ կենսաբազմազանության պահպանության գլոբալ նպատակների, ինչպես նաև՝ ԵՄ-ում կենսաբազմազանության կորստի հիմնական պատճառների վերացման պարտավորությունները՝ հիմնված այդ առնչությամբ սահմանված չափելի նպատակների վրա:

Կենսաբազմազանության ռազմավարությունը կսահմանի հատուկ միջոցառումներ այդ նպատակների իրագործման համար: Այդ միջոցառումները կարող են վերաբերել նաև քանակական նպատակներին, ինչպիսիք են՝ «Natura 2000» ցանցում կենսաբազմազանությամբ հարուստ և ծովային պահպանվող տարածքների ծածկույթի ավելացումը: Անդամ պետությունները պետք է նաև ամրապնդեն միջսահմանային համագործակցությունը պահպանելու և ավելի արդյունավետ կերպով վերականգնելու «Natura 2000» ցանցում ընդգրկված տարածքները: Հանձնաժողովը կսահմանի այն միջոցառումները և օրենսդրությունը, որոնք անհրաժեշտ են անդամ պետություններին բարելավելու և էկոլոգիապես նորմալ վիճակի բերելու վնասված էկոհամակարգերը,

[21] https://ipbes.net/news/ipbes-global-assessment-preview

ներառյալ՝ ածխածնով հարուստ էկոհամակարգերը: Կենսաբազմազանության ռազմավարությունը կներառի նաև առաջարկներ եվրոպական քաղաքների կանաչապատման և քաղաքային տարածքներում կենսաբազմազանության ավելացման վերաբերյալ: Հանձնաժողովը կքննարկի բնության վերականգնման պլանի մշակումը և կքննարկի այդ նպատակի իրագործման համար անդամ պետություններին ֆինանսավորման տրամադրման եղանակները:

ԵՄ բոլոր քաղաքականությունները պետք է նպաստեն Եվրոպայի բնական կապիտալի պահպանմանը և վերականգնմանը[22]: 2.1.6 բաժնում ներկայացված «Ֆերմայից սեղան» ռազմավարությունը կանդրադառնա գյուղատնտեսությունում թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործմանը: Ձկնաբուծության ընդհանուր քաղաքականության շրջանակներում աշխատանքները կշարունակվեն՝նվազեցնելով ձկնաբուծության ազդեցությունը էկոհամակարգերի վրա, հատկապես խոցելի տարածքներում: Հանձնաժողովը կաջակցի նաև ծովային ավելի փոխկապված և լավ կառավարող տարածքներին:

Անտառային էկոհամակարգերը գտնվում են կլիմայի փոփոխության հետևանքով մեծացող ճնշման տակ: ԵՄ անտառածածկ տարածքը պետք է բարելավվի ինչպես որակապես, այնպես էլ՝ քանակապես, որպեսզի ԵՄ-ն հասնի կլիմայական չեզոքությանը և ունենա առողջ շրջակա միջավայր: Կայուն վերականգնումը և անտառվերականգնումը, ինչպես նաև՝ դեգրադացված անտառների վերականգնումը կարող են մեծացնել CO_2-ի կլանումը՝ միաժամանակ բարելավելով անտառների դիմակայունությունը և խթանելով շրջանաձև կենսատնտեսությունը: Հիմնվելով 2030թ. կենսաբազմազանության ռազմավարության վրա՝ Հանձնաժողովը պատրաստելու է ԵՄ անտառային նոր ռազմավարություն, որը կընդգրկի ամբողջ անտառային շրջանը և կխթանի անտառների կողմից մատուցվող բազմաթիվ ծառայություններ:

ԵՄ նոր անտառային ռազմավարության հիմնական նպատակ կլինի Եվրոպայում անտառների պահպանումը և վերականգնումը, ինչը կօգնի ավելացնել CO_2-ի կլանումը, նվազեցնել անտառային հրդեհների հաճախականություն ու տարածումը և ամբողջությամբ խթանել կենսատնտեսությունը՝ կենսաբազմազանության համար բարենպաստ էկոլոգիական սկզբունքնե-

[22] ԵՄ ուղեցույցներ SWD (2019) 305 ՎԵՐՋՆԱԿԱՆ «ԵՄ ուղեցույց էկոհամակարգերը և դրանց ծառայությունները որոշումների կայացման գործընթացում ինտեգրելու վերաբերյալ»

րի լիակատար պահպանմամբ: Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության ներքո գործող ազգային ռազմավարական ծրագրերը պետք է խրախուսեն անտառտնտեսվարողներին պահպանել, աճեցնել և կառավարել անտառները կայուն եղանակով: Հիմք ընդունելով «Աշխարհի անտառների պահպանության և վերականգնման համար ԵՄ գործողությունների խթանման մասին հաղորդագրությունը»[23], Հանձնաժողովը միջոցներ կձեռնարկի, ինչպես կարգավորիչ, այնպես էլ՝ այլ կարգով խթանելու ներմուծվող ապրանքներն ու արժեքային շղթաները, որոնք չեն ենթադրում անտառահատումներ և անտառների դեգրադացում:

Կայուն «կապույտ տնտեսությունը» կենտրոնական դեր պետք է ունենա ԵՄ հողային ռեսուրսների նկատմամբ բազմաթիվ պահանջների մեղմման և կլիմայի փոփոխության դեմ պայքարելու գործում: Էլ ավելի է արժևորվում օվկիանոսների դերը կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցում: Նպաստելով ջրային և ծովային ռեսուրսների օգտագործման բարելավմանը և, օրինակ՝ խթանելով սպիտակուցի նոր աղբյուրների արտադրությունն ու օգտագործումը՝ կթեթևանա գյուղատնտեսական հողերի ծանրաբեռնվածությունը: Ընդհանուր առմամբ, կլիմայի փոփոխության երկարաժամկետ լուծումները պահանջում են ավելի մեծ ուշադրություն դարձնել էկոլոգիական լուծումներին, ներառյալ՝ ծովերի ու օվկիանոսների առողջությանը և դիմակայունությանը: Հանձնաժողովը կվերլուծի միջազգային հանձնաժողովի «Օվկիանոսների վերաբերյալ կլիմայի փոփոխության հատուկ զեկույց»-ի արդյունքները[24] և կառաջարկի ծովային տարածքի միջոցառումներ: Դրանք կներառեն ծովային տարածության կառավարման ավելի կայուն եղանակներ մասնավորապես՝ կաջակցեն օգտվելու ծովային տարածքում վերականգնվող էներգիայի զարգացող ներուժից: Հանձնաժողովը նաև կիրականացնի զրոյական հանդուրժողականության մոտեցում ապօրինի, չզեկուցվող և չկարգավորվող ձկնորսության նկատմամբ: Պորտուգալիայում անցկացված ՄԱԿ-ի 2020 թ. «Օվկիանոսներին նվիրված համաժողովը» ԵՄ-ի համար առիթ է ընդգծելու օվկիանոսների խնդիրներին ուղղված գործողությունների կարևորությունը:

[23] Վերջնական COM/2019/352
[24] Կլիմայի փոփոխության պայմաններում օվկիանոսի և կրիո ոլորտի հատուկ զեկույց

2.1.8. Զրոյական աղտոտվածության հավակնություն՝ հանուն թունավոր նյութերից զերծ միջավայրի

Թունավոր նյութերից զերծ միջավայրի ստեղծումը պահանջում է ավելի շատ գործողություններ կանխարգելելու աղտոտումը, ինչպես նաև՝ միջոցառումներ այն մաքրելու և վերականգնելու համար: Եվրոպայի քաղաքացիներին և էկոհամակարգերը պաշտպանելու նպատակով ԵՄ-ն պետք է ավելի լավ վերահսկի, հաշվետվու լինի, կանխարգելի և վերացնի օդի, ջրի, հողի և սպառողական ապրանքների աղտոտվածությունը: Այդ նպատակին հասնելու համար ԵՄ-ն և անդամ պետությունները պետք է քաղաքականություններին և կանոնակարգերին ցուցաբերեն ավելի համակարգային մոտեցում: **Այս փոխկապակցված մարտահրավերներին դիմակայելու համար Հանձնաժողովը 2021 թվականին ընդունելու է օդի, ջրի և հողի զրոյական աղտոտվածության գործողությունների ծրագիր:**

Ստորերկրյա և մակերևութային ջրերի բնական գործառույթները պետք է վերականգնվեն: Սա էական նշանակություն ունի լճերում, գետերում, ճահճուտներում և գետաբերաններում կենսաբազմազանությունը պահպանելու և վերականգնելու համար, ջրհեղեղներից վնասները կանխելու և սահմանափակելու համար: «Ֆերմայից սեղան» ռազմավարության իրականացումը կնվազեցնի սննդանյութերի չարաշահումից առաջացող աղտոտվածությունը: Բացի այդ, Հանձնաժողովը միջոցառումներ կառաջարկի աղտոտվածության դեմ պայքարելու համար՝ քաղաքային ջրահեռացումից և նոր կամ առանձնակի վտանգավոր աղտոտման աղբյուրներից, ինչպիսիք են՝ միկրոպլաստիկները և քիմիական նյութերը, ներառյալ՝ դեղամիջոցները: Անհրաժեշտ է նաև պայքարել տարբեր աղտոտիչների հանրագումարային ազդեցության դեմ:

Հանձնաժողովը հիմք կընդունի օդի որակի ընթացիկ օրենսդրության գնահատումից քաղած դասերը[25]: Այն նաև կառաջարկի ամրապնդել մոնիթորինգի[26], մոդելավորման և օդի որակի ծրագրային դրույթները, որոնք կօգնեն տեղական իշխանություններին հասնելու ավելի մաքուր օդի: Հանձնաժողովը, մասնավորապես, կառաջարկի վերանայել օդի որակի ստանդարտնե-

[25] Շրջակա օդի որակի մասին դիրեկտիվների պիտանիության ստուգում SWD(2019) 427

[26] Ներառյալ՝ օգտագործելով թվայնացման միջոցով տրամադրված մոնիթորինգի նոր հնարավորությունները

ը՝ դրանք առավելապես համապատասխանեցնելու Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկություններին:

Հանձնաժողովը կվերանայի խոշոր արդյունաբերական կայանքներից աղտոտվածության դեմ պայքարի ԵՄ միջոցառումները: Այն կանդրադառնա օրենսդրության ոլորտային շրջանակին և կլիմայի, էներգիայի և շրջանաձև տնտեսության քաղաքականություններին դրա լիարժեք համապատասխանեցման եղանակներին: Հանձնաժողովը նաև կաշխատի անդամ պետությունների հետ արդյունաբերական վթարների կանխարգելումը բարելավելու ուղղությամբ:

Թունավոր նյութերից զերծ միջավայր ապահովելու համար Հանձնաժողովը կներկայացնի քիմիական նյութերի կայուն ռազմավարություն: Սա և՛ կօգնի ավելի լավ պաշտպանել քաղաքացիներին և շրջակա միջավայրը վտանգավոր քիմիական նյութերից, և՛ կխրախուսի նորարարություն՝ անվտանգ և կայուն այլընտրանքների մշակման համար: Բոլոր կողմերը, ներառյալ՝ արդյունաբերությունը, պետք է միասին աշխատեն ավելի լավ առողջության և շրջակա միջավայրի պահպանության և համաշխարհային մրցունակության բարձրացման համար: Սա իրագործելի կլինի իրավական դաշտի պարզեցման և ամրապնդման միջոցով: Հանձնաժողովը կվերանայի ԵՄ գործակալությունների և գիտական մարմինների՝ «մեկ նյութ՝ մեկ գնահատում» գործընթացին անցնելու հնարավորությունները և քիմիական նյութերի հետ կապված գործողություններում առաջնահերթությունը կտրվի ավելի լայն թափանցիկության ապահովմանը: Հուգահեռաբար, կարգավորող դաշտը պետք է օպերատիվ ձևով արտացոլի էնդոկրին համակարգերին խաթարող, ապրանքների, ներառյալ՝ ներմուծված տեսակների մեջ վտանգավոր քիմիական նյութերի մասին գիտական ապացույցները, տարատեսակ և բարձր կայունությամբ քիմիական նյութերի հանրագումարային ազդեցության ռիսկերը:

2.2. Կայունության ինտեգրումը ԵՄ բոլոր քաղաքականություններում

2.2.1. Էկոլոգիապես անվտանգ գործունեության ֆինանսավորման և ներդրումների ներգրավում և արդար անցման ապահովում

«Եվրոպական կանաչ գործարք»-ով նախատեսված հավակնությանը հասնելու համար ներդրումների զգալի կարիք կա: Հանձնաժողովը գնահատել է, որ ներկայիս 2030 թ. կլիմայական և էներգետիկ նպատակներին հասնելու համար կպահանջվի 260 միլիարդ եվրո տարեկան լրացուցիչ ներդրումներ[27]՝ 2018 թ. ՀՆԱ-ի մոտ 1,5%-ը[28]: Ներդրումների այս հոսքը պետք է պահպանվի ժամանակի ընթացքում: Ներդրումային մարտահրավերի մեծությունը պահանջում է մոբիլիզացնել ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածին:

Հանձնաժողովը կներկայացնի Եվրոպական կայուն ներդրումների ծրագիրը, որը կօգնի բավարարել լրացուցիչ ֆինանսավորման կարիքները: Այն մեկտեղելու է կայուն ներդրումներին հատկացվելիք ֆինանսավորումը և կանաչ ներդրումների համար նպաստավոր հնարավորությունների շրջանակի բարելավման առաջարկները: Միևնույն ժամանակ, կարևոր է նախագծել կայուն ծրագրերի շարք: Տեխնիկական օժանդակությունը և խորհրդատվական ծառայությունները կաջակցեն ծրագրեր խթանողներին նախագծել, մշակել ծրագրեր և հասանելիություն ունենալ ֆինանսավորման աղբյուրներին:

ԵՄ բյուջեն առանցքային դերակատարում կունենա: Հանձնաժողովն առաջարկել է ԵՄ բոլոր ծրագրերում կլիմայական ինտեգրման 25%-ի թիրախ: ԵՄ բյուջեն կնպաստի կլիմայական նպատակների իրականացմանը նաև եկամտային տեսանկյունից: Հանձնաժողովը առաջարկել է եկամուտների նոր հոսքեր («Սեփական ռեսուրսներ»), որոնցից մեկը հիմնված է չվերամշակված պլաստիկե փաթեթավորման թափոնների վրա: Եկամտի երկ-

[27] «Համախմբվելով Միասնական էներգետիկ միության շուրջ և կլիմայական գործողությունների իրականացման գործում. մաքուր էներգիայի հաջող անցման հիմքերի ստեղծում» հաղորդագրություն COM(2019) 285

[28] Այս գնահատականները պահպանողական են, քանի որ հաշվի չեն առնում օրինակ՝ կլիմայական հարմարվողականություն կամ բնապահպանական այլ մարտահրավերներ՝ օր. կենսաբազմազանության ուղղությամբ ներդրումային կարիքները: Դրանք նաև չեն ներառում պետական ներդրումները, որոնք անհրաժեշտ են անցումային շրջանի սոցիալական և անգործության ծախսերը հոգալու համար:

որոդ հոսքը կարող է ներառել ԵՄ արտանետումների քվոտանե-
րի առևտրի համակարգի աճուրդից ստացված հասույթի 20%-ի
հատկացումը ԵՄ բյուջեին:

**«InvestEU» հիմնադրամի առնվազն 30%-ը կուղղվի կլիմա-
յի փոփոխության դեմ պայքարին:** Ավելին, ծրագրերը ենթա-
կա կլինեն կայունության ճշգրտման՝ պարզելու դրանց օգուտները
կլիմայական, բնապահպանական և սոցիալական նպատակների
համար: «InvestEU» հիմնադրամն անդամ պետություններին առա-
ջարկում է նաև օգտագործել ԵՄ բյուջետային երաշխիքը, օրի-
նակ՝ իրականացնել իրենց տարածքում և տարածաշրջաններում
կլիմայի հետ կապված համախմբվածության քաղաքականութ-
յան նպատակները: «InvestEU»-ն նաև ամրապնդում է համագոր-
ծակցությունը ազգային բանկերի և հաստատությունների հետ,
ինչը կխթանի նրանց ամբողջական «կանաչ գործունեությանը»
ի նպաստ ԵՄ քաղաքականության նպատակների իրականաց-
մանը: Ավելին, ԵՄ արտանետումների քվոտաների առևտրի համա-
կարգի վերանայման շրջանակներում, Հանձնաժողովը կվերանայի
ԵՄ երկարաժամկետ բյուջեից չֆինանսավորվող Նորարարության
և Արդիականացման ֆոնդերի դերը: Նպատակը կլինի ամրապնդել
նրանց դերը և արդյունավետությունը ԵՄ տարածքում նորարարա-
կան և կլիմայական տեսանկյունից չեզոք լուծումներ գործարկելու
հարցում: ԵՄ արտանետումների առևտրի համակարգի վերանայ-
ման ընթացքում դիտարկվելու է նաև քվոտաների տրամադրումից
ստացվող լրացուցիչ եկամուտների հատկացումը ԵՄ բյուջեին դի-
տարկելու արդար անցման ֆինանսավորման ամրապնդումը:

Հանձնաժողովը համագործակցելու է նաև Եվրոպական ներդրու-
մային բանկի (ԵՆԲ) խմբի, ազգային բանկերի և ինստիտուտների,
ինչպես նաև՝ միջազգային այլ ֆինանսական հաստատությունների
հետ: ԵՆԲ-ն իր առջև նպատակ է դրել կրկնապատկել կլիմայական
ֆինանսավորումը՝ մինչև 2025 թվականը 25%-ից հասցնելով 50%-
ի ՝ այդպիսով դառնալով Եվրոպայի կլիմայական բանկը:

**Որպես «Կայուն Եվրոպա ներդրումային ծրագրի» մաս՝
Հանձնաժողովը կառաջարկի ստեղծել Արդար անցումային
մեխանիզմ, ներառյալ՝ Արդար անցումային ֆոնդ, որպեսզի
ոչ ոք չանտեսվի**: Վերափոխումը կարող է հաջողություն ունենալ
միայն այն դեպքում, եթե այն իրականացվի արդար և ներառա-
կան եղանակով: Ամենախոցելիներն առավելապես են տուժում
կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացման

վնասակար հետևանքներից: Միևնույն ժամանակ, վերափոխման կառավարումը կհանգեցնի բիզնեսի մոդելների, հմտությունների պահանջների և հարաբերական գների զգալի կառուցվածքային փոփոխությունների: Քաղաքացիները, կախված իրենց սոցիալական և աշխարհագրական հանգամանքներից, կտուժեն տարբեր եղանակներով: Ոչ բոլոր անդամ պետությունները, շրջաններն ու քաղաքներն են սկսում վերափոխումը նույն կետից կամ ունեն արձագանքման միևնույն կարողությունները: Այս մարտահրավերները պահանջում են ամուր քաղաքական արձագանք բոլոր մակարդակներում:

Արդար անցումային մեխանիզմը կենտրոնանալու է այն շրջանների և ոլորտների վրա, որոնք առավելապես տուժում են վերափոխումից՝ կախման մեջ լինելով հանածո վառելիքներից կամ ածխածնատար գործընթացներից: Մեխանիզմը կսնվի ԵՄ բյուջեի ֆինանսավորման աղբյուրներից, ինչպես նաև՝ կկիրառի ԵՆԲ խմբի լծակները՝ անհրաժեշտ մասնավոր և հանրային ռեսուրսների հայթայթման համար: Աջակցությունը կապված կլինի ցածր ածխածնային և կլիմայական կայուն գործողություններին անցում կատարելու խթանման հետ: Այս մեխանիզմը նաև ձգտելու է պաշտպանել անցումային փուլում առավել խոցելի քաղաքացիներին և աշխատողներին՝ ապահովելով նոր հմտությունների ձեռքբերման ծրագրերի հասանելիություն, աշխատատեղեր տնտեսության նոր սեկտորներում կամ էներգախնայող բնակարաններ: Հանձնաժողովը կաշխատի անդամ պետությունների և տարածաշրջանների հետ՝ օգնելու նրանց իրականացնելու տարածքային անցման ծրագրերը:

Մեխանիզմը կստեղծվի ի լրումն ԵՄ բյուջեից էական ներդրումների՝ ներգրավելով անցումային գործընթացին անմիջականորեն վերաբերող բոլոր ծրագրերը, ինչպես նաև՝ կֆինանսավորվի այլ ֆոնդերից, ինչպես օրինակ՝ Եվրոպական տարածաշրջանային զարգացման հիմնադրամը և Եվրոպական սոցիալական հիմնադրամ պլյուսը:

Անցման երկարաժամկետ ֆինանսավորման կարիքները բավարարելու համար Հանձնաժողովը Կայուն «Եվրոպայի ներդրումային ծրագրի» շրջանակներում համապատասխան գործընկերների հետ կշարունակի ուսումնասիրել լրացուցիչ աղբյուրների մոբիլիզացումը և այդ նպատակին հասնելու նորարարական եղանակները:

Սոցիալապես արդար անցման անհրաժեշտությունը պետք է արտացոլվի նաև ԵՄ և ազգային մակարդակի քաղաքականություններում: Սա կնշանակի ներդրումների կատարում ապահովելու մատչելի լուծումներ ածխածնի գնագոյացման քաղաքականությունից տուժած անձանց համար, օրինակ՝ հասարակական տրանսպորտի միջոցով, ինչպես նաև՝ պայքարելով էներգետիկ աղքատության դեմ և խթանելով նոր հմտությունների ձեռքբերումը: Կլիմայի և շրջակա միջավայրի քաղաքականության համահունչ և ամբողջական մոտեցումը հաճախ նախապայման են հանդիսանում արդարացիության ապահովման համար, ինչը արձանագրվեց տրանսպորտի տարբեր տեսակների հարկման քննարկումների դեպքում: Ընկերությունների և նրանց աշխատողների համար ակտիվ սոցիալական երկխոսությունը օգնում է կանխատեսել և հաջողությամբ կառավարել փոփոխությունները: Մակրոտնտեսական համակարգման եվրոպական կիսամյակի գործընթացը կօժանդակի այս հարցերի շուրջ ազգային քաղաքականություններին:

Մասնավոր հատվածը առանցքային կլինի կանաչ անցումը ֆինանսավորելու համար: Երկարաժամկետ ազդանշաններն անհրաժեշտ են ֆինանսական և կապիտալի հոսքերը դեպի կանաչ ներդրումներ ուղղելու և ոչ արդյունավետ ակտիվներից խուսափելու համար: Հանձնաժողովը 2020 թ. երրորդ եռամսյակում կներկայացնի վերանայված կայուն ֆինանսավորման ռազմավարություն, որը կվերաբերի մի շարք գործողությունների:

Առաջին՝ ռազմավարությունը կամրապնդի կայուն ներդրումների հիմքերը: Սա, մասնավորապես, կպահանջի, որ Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական խորհուրդը ընդունեն տաքսոնոմիա՝ էկոլոգիապես կայուն գործողությունները դասակարգելու համար: Կայունությունը պետք է հետագայում ներառվի կորպորատիվ կառավարման շրջանակներում, քանի որ շատ ընկերություններ դեռ չափից շատ են հենվում կարճաժամկետ ֆինանսական արդյունքների վրա՝ համեմատած երկարաժամկետ զարգացման և կայունության սկզբունքների հետ: Միևնույն ժամանակ, ընկերությունները և ֆինանսական հաստատությունները պետք է ավելացնեն իրենց տեղեկատվությունը կլիմայի և բնապահպանական տվյալների վերաբերյալ, որպեսզի ներդրողները լիարժեք տեղեկացված լինեն իրենց ներդրումների կայունության մասին: Այդ նպատակով Հանձնաժողովը կվերանայի «Ոչ ֆինանսական հաշվետվությունների մասին դիրեկտիվը»: Բնապահպանական ռիսկերի և մեղմման հնարավորությունների պատշաճ

կառավարումն ապահովելու և դրանց հետ կապված գործարքային ծախսերը նվազեցնելու համար Հանձնաժողովը նաև կաջակցի ձեռնարկություններին և շահագրգիռ այլ կողմերին՝ մշակելու ստանդարտացված բնական կապիտալի հաշվառման պրակտիկա ԵՄ-ում և միջազգային մակարդակում:

Երկրորդ, ներդրողների և ընկերությունների համար կտրամադրվեն ավելի մեծ հնարավորություններ՝ նրանց համար ավելի դյուրին դարձնելով կայուն ներդրումների հնարավորությունները և դրանց վստահելիության ապահովումը: Դա կարելի է անել մանրածախ ներդրումային արտադրանքի հստակ պիտակների միջոցով և ԵՄ կանաչ պարտատոմսերի ստանդարտի մշակմամբ, որն առավելագույնս դյուրացնում է կայուն ներդրումները:

Երրորդ՝ կլիմայական և բնապահպանական ռիսկերը կառավարվելու և ինտեգրվելու են ֆինանսական համակարգում: Սա կնշանակի այդպիսի ռիսկերի ավելի լավ ինտեգրում ԵՄ պրուդենցիալ վերահսկողության շրջանակներում և կանաչ ակտիվների նկատմամբ առկա կապիտալի պահանջների համապատասխանության գնահատում: Մենք կքննարկենք նաև, թե ինչպես կարող է մեր ֆինանսական համակարգը նպաստել կլիմայի և շրջակա միջավայրի ռիսկերի նկատմամբ կայունության բարձրացմանը, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է բնական աղետներից ծագող ֆիզիկական ռիսկերին և վնասներին:

2.2.2. Անցում «կանաչ» ազգային բյուջեի և ճիշտ գնային ազդանշանների հաղորդում

Ազգային բյուջեները առանցքային դեր ունեն անցման գործընթացում: «Կանաչ» բյուջետավորման գործիքների ավելի լայն օգտագործումը կտեղափոխի հանրային ներդրումները, սպառումը և հարկումը կանաչ գերակայությունների դաշտ և հնարավոր կլինի խուսափել վնասակար սուբսիդիաներից: Հանձնաժողովը կաշխատի անդամ պետությունների հետ ստուգելու և չափորոշելու «կանաչ» բյուջետավորման հնարավորությունները: Այս կերպ ավելի դյուրին կլինի գնահատել, թե տարեկան բյուջեները և միջնաժամկետ հարկաբյուջետային ծրագրերը որքանով են հաշվի առնում բնապահպանական նկատառումներն ու ռիսկերը և դասեր քաղում լավագույն գործելակերպերից: Եվրոպական տնտեսական կառավարման շրջանակի վերանայումը հանրային ֆինանսների որակի համատեքստում կներառի հղում կանաչ հանրային

ներդրումների: Սա առաջ կբերի քննարկումներ ԵՄ հարկաբյուջետային կառավարման բարելավման շուրջ: Քննարկումների արդյունքը հիմք կհանդիսանա ցանկացած հետագա հնարավոր քայլերի համար, ներառյալ՝ ինչպես վարվել կանաչ ներդրումների հետ ԵՄ հարկաբյուջետային կանոնների շրջանակներում՝ միևնույն ժամանակ պահպանելով երաշխիքներ պարտքի կայունության ռիսկերից:

Լավ մշակված հարկային բարեփոխումները կխթանեն տնտեսական աճն ու կայունությունը կլիմայական ցնցումների դեպքում և կնպաստեն ավելի անաչառ հասարակության ստեղծմանը և արդար անցմանը: Այդ վերափոխումներն ուղղակի դեր են խաղում՝ ապահովելով գնային ճիշտ ազդակներ և ստեղծելով պատշաճ խթաններ արտադրողների, օգտագործողների և սպառողների կողմից կայուն վարքագծի դրսևորման համար: Ազգային մակարդակում «Եվրոպական կանաչ գործարք»-ը կստեղծի լայն հարկային բարեփոխումների համատեքստ՝ վերացնելով հանածո վառելիքի սուբսիդիաները, հարկային բեռը աշխատուժից տեղափոխելով շրջակա միջավայրի աղտոտվածության վրա և հաշվի առնելով սոցիալական նկատառումները: Անհրաժեշտ է ապահովել Հանձնաժողովի առաջարկների շտապ ընդունումը ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) դրույքաչափերի մասին, որը ներկայումս գտնվում է Եվրոպական միության խորհրդի կողմից քննարկման փուլում, որպեսզի անդամ պետությունները կարողանան ավելի նպատակային օգտագործել ԱԱՀ-ի դրույքաչափերը արտացոլելու ավելացող բնապահպանական հավակնությունները, օրինակ՝ օրգանական միրգ և բանջարեղենի աճեցման աջակցության հարցում:

Այժմ ընթացքի մեջ են պետական աջակցության համապատասխան ուղեցույցների գնահատումները՝ ներառյալ բնապահպանական և էներգետիկ ոլորտների պետական աջակցության ուղեցույցները: Ուղեցույցները կվերանայվեն մինչև 2021 թվականը արտացոլելու «Եվրոպական կանաչ գործարք»-ի քաղաքականության նպատակները՝ աջակցելով մինչև 2050 թվականը կլիմայի չեզոքության ծախսարդյունավետ անցմանը, և կնպաստեն հանածո վառելիքի, մասնավորապես՝ առավել աղտոտող տեսակների փուլային վերացմանը՝ ապահովելով հավասար պայմաններ ներքին շուկայում: Այս փոփոխությունները նաև հնարավորություն են տալիս դիմակայել մաքուր արտադրանքի կիրառման շուկայական խոչընդոտներին:

2.2.3. Հետազոտությունների մոբիլիզացում և նորարարությունների խթանում

Նոր տեխնոլոգիաները, կայուն լուծումները և հեղափոխիչ նորարարությունը կարևոր նշանակություն ունեն «Եվրոպական կանաչ գործարք»-ի նպատակներին հասնելու համար: Մաքուր տեխնոլոգիաներում իր մրցակցային առավելությունը պահպանելու համար ԵՄ-ն պետք է զգալիորեն մեծացնի նոր տեխնոլոգիաների լայնածավալ գործարկումը և ցուցադրումը տարբեր ոլորտներում և միասնական շուկայում՝ ստեղծելով նոր նորարարական արժեքային շղթաներ: Այս մարտահրավերը վեր է առանձին անդամ պետությունների հնարավորություններից: «Հորիզոն Եվրոպա»-ն, համագործակցելով ԵՄ այլ ծրագրերի հետ, առանցքային դեր կխաղա ազգային հանրային և մասնավոր ներդրումների կարգավորման գործում: «Հորիզոն Եվրոպա»-ի բյուջեի առնվազն 35%-ը կֆինանսավորի կլիմայական նոր լուծումներ, որոնք կարևոր են «Կանաչ գործարք»-ի իրականացման համար:

«Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում հասանելի ողջ գործիքակազմը կաջակցի անհրաժեշտ հետազոտական և նորարարական ջանքերին: «Կանաչ գործարքների առաքելություններից» չորսը կօգնեն իրականացնել լայնածավալ փոփոխություններ այն ոլորտներում, ինչպիսիք են՝ կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը, օվկիանոսները, քաղաքները և հողերը: Այս առաքելությունները միավորելու են շահագրգիռ կողմերի լայն շրջանակ, ներառյալ՝ տարածաշրջանների ու քաղաքացիների: Արդյունաբերության և անդամ պետությունների հետ համագործակցությունը կնպաստի տրանսպորտի, ներառյալ՝ մարտկոցների, մաքուր ջրածնի, ցածր ածխածնային պողպատի ստացման, շրջանաձև կենսաբազային սեկտորների և կառուցապատված միջավայրի վերաբերյալ հետազոտություններին և նորարարություններին: Գիտելիքների և նորարարությունների համայնքները, որոնք կառավարվում են «Եվրոպական նորարարության և տեխնոլոգիայի ինստիտուտի» կողմից, կշարունակեն խրախուսել համագործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների, հետազոտական կազմակերպությունների և կլիմայի փոփոխությամբ, կայուն էներգիայի, ապագայի սննդի հարցերով զբաղվող ընկերությունների և էկոլոգիապես մաքուր ու խելացի, ինտեգրված քաղաքային տրանսպորտի միջև: «Եվրոպական նորարարական խորհուրդը» մեծ ներուժ ունեցող ստարտափերին և ՓՄՁ-ներին կհատկացնի ֆինանսավորում, բաժնետիրական կապիտալի ներդրումային և բիզնես աքսելերացիայի

ծառայություններ, որպեսզի վերջիններս հաջողություն գրանցեն «Կանաչ գործարք»-ի նորարարությամբ, որն արագորեն կընդլայնվի համաշխարհային շուկաներում:

Ավանդական մոտեցումները բավարար չեն: Կարևորելով փորձարկումները և աշխատելով ոլորտների ու բնագավառների ընդհանուր միջավայրերում՝ ԵՄ հետազոտական և նորարարական օրակարգը կհիմնվի համակարգային մոտեցման վրա, ինչն անհրաժեշտ է «Կանաչ գործարք»-ի նպատակներին հասնելու համար: «Հորիզոն Եվրոպա» ծրագիրը նաև ներգրավելու է տեղական համայնքներին աշխատելու ավելի կայուն ապագայի ուղղությամբ այն նախաձեռնություններում, որոնք ձգտում են համատեղել հասարակության ձգտումը և տեխնոլոգիական մղումը:

Տվյալների վրա հիմնված նորարարության հիմքում մատչելի և փոխգործունակ տվյալներն են: Այս տվյալները, զուգորդվելով թվային ենթակառուցվածքների (օր.՝ գերհամակարգիչներ, ամպային, գերարագ ցանցեր) և արհեստական բանականության լուծումների հետ, հեշտացնում են որոշումներ կայացնելու գործընթացը՝ հիմնվելով ապացույցների վրա և ընդլայնում են բնապահպանական մարտահրավերների բացահայտման և դիմակայման կարողությունը: Հանձնաժողովը կաջակցի բացահայտել թվային վերափոխման ամբողջական օգուտները էկոլոգիական վերափոխմանն աջակցելու համար: Հրատապ առաջնահերթությունը կլինի ԵՄ կարողությունների բարձրացումը կանխատեսելու և կառավարելու բնապահպանական աղետները: Դրա իրականացման համար Հանձնաժողովը կհամախմբի եվրոպական գիտական և արդյունաբերական առաջադեմ փորձը մոլորակի շատ բարձր ճշգրտությամբ թվային մոդելի մշակման համար:

2.2.4. Ակտիվացնելով կրթությունը և ուսուցումը

Դպրոցները, վերապատրաստման հաստատությունները և համալսարանները լավ հնարավորություն ունեն ներգրավելու աշակերտներին, ծնողներին և համայնքի ավելի լայն շերտերին անհրաժեշտ փոփոխությունների շուրջ, որպեսզի անցումը հաջողվի: Հանձնաժողովը կպատրաստի եվրոպական իրավասությունների շրջանակ, որը կօգնի զարգացնել և գնահատել գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքը կլիմայի փոփոխության և կայուն զարգացման նկատմամբ: Այն նաև կտրամադրի օժանդակ նյութեր և կնպաստի ԵՄ-ի ուսուցիչների վերապատրաստման ծրագրերի շրջանակում դրական փորձի փոխանակմանը:

Հանձնաժողովն աշխատում է անդամ պետություններին նոր ֆինանսական միջոցներ տրամադրելու ուղղությամբ՝ դպրոցների շենքերն ու գործառնություններն ավելի կայուն դարձնելու համար: Սա ամրապնդել է համագործակցությունը Եվրոպական ներդրումային բանկի հետ և ավելի ամուր կապեր է ստեղծել կառուցվածքային ֆոնդերի և նոր ֆինանսական գործիքների միջև՝ նպատակ ունենալով 2020 թվականին 3 միլիարդ եվրոյի չափով ներդրում կատարել դպրոցների ենթակառուցվածքներում:

Էկոլոգիական անցումից օգուտներ քաղելու համար անհրաժեշտ է ապահովել պրոակտիվ վերաորակավորում և կատարելագործում: Առաջարկվող «Եվրոպական սոցիալական հիմնադրամ + »-ը կարևոր դեր կխաղա եվրոպացի աշխատողների համար անկում ապրող ոլորտներից դեպի զարգացող ոլորտներ տեղափոխվելու և նոր գործընթացներին հարմարվելու համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման տեսանկյունից: Կանաչ տնտեսությունում աշխատունակության բարձրացման համար կվերանայվեն «Հմտությունների օրակարգը» և «Երաշխիք երիտասարդության համար» ծրագիրը:

2.2.5. Կանաչ երդում. «Մի՛ վնասիր»

ԵՄ բոլոր գործողություններն ու քաղաքականությունները պետք է համախմբվեն աջակցելու ԵՄ-ին իրականացնելու կայուն ապագայի հաջող և արդարացի անցումը: Հանձնաժողովի կարգավորման ավելի լավ գործիքները ամուր հիմք են ստեղծում դրա համար: Հիմնվելով հանրային խորհրդատվությունների, բնապահպանական, սոցիալական և տնտեսական ազդեցությունները բացահայտելու և ՓՄՁ-ների ազդեցության և նորամուծությունների խթանման կամ խոչընդոտման վերլուծության վրա՝ ազդեցության գնահատումը նպաստում է նվազագույն ծախսերով արդյունավետ քաղաքականության ընտրությանը՝ համահունչ «Կանաչ գործարք»-ի նպատակներին: Գնահատումները նաև համակարգայնորեն գնահատում են գործող օրենսդրության և նոր գերակայությունների միջև համապատասխանեցումը:

Գործող օրենսդրության անհամապատասխանությունները պարզելու և վերացնելու իր աշխատանքին աջակցելու համար **Հանձնաժողովը շահագրգիռ կողմերին հրավիրում է օգտագործել առկա հարթակները[29] օրենսդրությունը պարզեցնելու և**

[29] *«Արտահայտի՛ր քո կարծիքը՝ թեթևացրո՛ւ բեռը»* վեբ-կայք՝ https://ec.europa.eu/info/law/better-regulation/lighten-load

Խնդրահարույց դեպքերը բացահայտելու համար: Հանձնաժողովը կքննարկի այս առաջարկությունները «Եվրոպական կանաչ գործարքի» համար գնահատումներ, ազդեցության գնահատումներ և օրենսդրական առաջարկներ պատրաստելիս:

Բացի այդ, հիմնվելով ավելի լավ կարգավորման քաղաքականության վերջին գույքագրման արդյունքների վրա, Հանձնաժողովը բարելավելու է կայունության և նորարարության խնդիրների լուծմանն ուղղված իր ավելի լավ կարգավորման ուղեցույցների և օժանդակ գործիքների ձևերը: Նպատակն է՝ ապահովել, որպեսզի «Կանաչ գործարքի» բոլոր նախաձեռնությունները հասնեն իրենց նպատակներին ամենաարդյունավետ և նվազագույն ծանրաբեռնված ձևով, իսկ ԵՄ մյուս բոլոր նախաձեռնություններն իրագործեն «մի՛ վնասիր» կանաչ երդումը: Այդ նպատակով բոլոր օրենսդրական առաջարկներին և պատվիրակված ակտերին ուղեկցող բացատրական հուշագիրը կներառի հատուկ բաժին, որում կմեկնաբանվի, թե ինչպես է յուրաքանչյուր նախաձեռնություն պահպանում այդ սկզբունքը:

3. ԵՄ-Ն՝ ՈՐՊԵՍ ԳԼՈԲԱԼ ԱՌԱՋԱՏԱՐ

Կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացման գլոբալ մարտահրավերները պահանջում են գլոբալ արձագանք: ԵՄ-ն կշարունակի խթանել և իրականացնել հավակնոտ քաղաքականություն շրջակա միջավայրի, կլիմայի և էներգետիկայի ուղղությամբ ամբողջ աշխարհում: Այն կմշակի ավելի ուժեղ «կանաչ գործարքի դիվանագիտություն» մյուսներին հավաստիացնելու և աջակցելու, որ ստանձնեն ավելի կայուն զարգացման խթանման իրենց մասնաբաժինը: Հավաստի օրինակ ծառայելով և հետևելով դիվանագիտությանը, առևտրային քաղաքականությանը, զարգացման աջակցությանը և այլ արտաքին քաղաքականություններին՝ ԵՄ-ն կհանդիսանա արդյունավետ սատարող: Հանձնաժողովը և Բարձր ներկայացուցիչը սերտորեն կաշխատեն անդամ պետությունների հետ մոբիլիզացնելու երկկողմ և բազմակողմ բոլոր դիվանագիտական ուղիները՝ ներառյալ ՄԱԿ-ին, G7-ին, G20-ին, Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և այլ համապատասխան միջազգային համաժողովներին:

ԵՄ-ն կշարունակի հետևել, որպեսզի Փարիզյան համաձայնագիրը մնա անփոխարինելի բազմակողմ շրջանակ՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի համար: Քանի որ ԵՄ մասնաբաժինը գլոբալ արտանետումներում նվազում է, այլ տարածաշրջանների կողմից համադրելի գործողությունն ու ավելացված ջանքերը կարևոր նշանակություն կունենան կլիմայական գլոբալ մարտահրավերին արդյունավետ կերպով դիմակայելու համար: Կլիմայական հավակնությունների վերաբերյալ բանավեճը կխթանվի առաջիկա ամիսներին՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի դրույթներով սահմանված կանոնավոր գույքագրումներին և վերանայումներին: Գլազգոյում 2020 թ. կայանալիք Կողմերի համաժողովը շրջադարձային է մինչև 2023 թ. գլոբալ արտանետումների գույքագրման տեսանկյունից: Այն կգնահատի երկարաժամկետ նպատակներ իրականացնելու ուղղությամբ առաջընթացը: Ներկայումս պարզ է, որ համաշխարհային հավակնությունների մակարդակն անբավարար է[30]: ԵՄ-ն առավել ինտենսիվորեն համագործակցելու է բոլոր գործընկերների հետ հավաքական ջանքերն ավելացնելու և նրանց օգնելու վերանայել և իրականացնել իրենց ազգային ներդրումները և մշակել հավակնոտ երկարաժամկետ ռազմավարութ-

[30] ՄԱԿ-ի 2019թ. արտանետումների ճեղքվածքի հաշվետվություն

յուն: Սա հիմնվելու է ԵՄ կողմից ավելացված հավակնությունների վրա, որոնք նկարագրված են 2-րդ բաժնում:

Զուգահեռաբար ԵՄ-ն կխթանի երկկողմ համագործակցությունը գործընկեր երկրների հետ և, անհրաժեշտության դեպքում, կսահմանի ներգրավման նորարարական ձևեր: ԵՄ-ն կշարունակի համագործակցել G20-ի տնտեսությունների հետ, որոնք պատասխանատու են ջերմոցային գազերի համաշխարհային արտանետումների 80%-ի համար: Միջազգային գործընկերների կողմից ձեռնարկված կլիմայական գործողությունների մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ են կարևոր աշխարհագրական ռազմավարություններ, որոնք արտացոլում են տարբեր ենթատեքստեր և տեղական կարիքներ, օրինակ՝ ներկա և ապագա մեծ արտանետողների, առավել նվազ զարգացած երկրների և փոքր զարգացող կղզի-պետությունների համար: **ԵՄ-ն նաև աշխատում է գլոբալ գործընկերների հետ՝ ածխածնի միջազգային շուկաները զարգացնելու համար՝** որպես կլիմայի գործողությունների համար տնտեսական խթաններ ստեղծելու հիմնական գործիք:

ԵՄ-ն շեշտը դնելու է իր անմիջական հարևաններին աջակցելու վրա: Եվրոպայի համար էկոլոգիական վերափոխումը կարող է լիովին արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե ԵՄ անմիջական հարևանները նույնպես արդյունավետ գործողություններ ձեռնարկեն: Աշխատանքներ են տարվում Արևմտյան Բալկանների կանաչ օրակարգի շուրջ: Հանձնաժողովը և Բարձր ներկայացուցիչը նախատեսում են նաև մի շարք ամուր գործընկերային հարաբերություններ ստեղծել շրջակա միջավայրի, էներգետիկայի և կլիմայական հարցերի ուղղությամբ Հարավային հարևանության պետությունների հետ և Արևելյան գործընկերության շրջանակներում:

ԵՄ-Չինաստան 2020 գագաթաժողովները Պեկինում և Լայպցիգում հնարավորություն կտան ամրապնդել ԵՄ-ի և Չինաստանի համագործակցությունը կլիմայական և բնապահպանական հարցերի շուրջ, հատկապես **Կունմինգի կենսաբազմազանության համաժողովին** և Գլազգոյում Կողմերի համաժողովին ընդառաջ:

Նույն կերպ, Աֆրիկայի հետ առաջիկա համապարփակ ռազմավարությամբ և Աֆրիկյան միության ու ԵՄ-ի 2020թ. Գագաթաժողովի շրջանակներում կլիմայական և բնապահպանական խնդիրները կդրվեն երկու մայրցամաքների հարաբերությունների

առանցքում: Մասնավորապես, Աֆրիկա-Եվրոպա կայուն ներդրումների և աշխատատեղերի դաշինքը կփորձի բացահայտել Աֆրիկայի ներուժը՝ արագ առաջընթաց ապահովելու դեպի կանաչ և շրջանաձև տնտեսություն, ներառյալ՝ կայուն էներգետիկայի, սննդի համակարգերի և խելացի քաղաքների ուղղությամբ: ԵՄ-ն կամրապնդի իր համագործակցությունը Աֆրիկայի հետ ավելի ընդլայնված կայուն և մաքուր էներգիայի գործարկման և առևտրի շրջանակներում: Վերականգնվող էներգիան և էներգաարդյունավետությունը, օրինակ՝ սննդի պատրաստման կիրառման նպատակով, առանցքային են Աֆրիկայում էներգիայի հասանելիության բացը լրացնելու համար՝ միաժամանակ ապահովելով CO_2-ի անհրաժեշտ քանակի կրճատում: ԵՄ-ն նախաձեռնելու է «NaturAfrica» նախաձեռնությունը պայքարելու կենսաբազմազանության կորստի դեմ՝ ստեղծելով պահպանվող տարածքների ցանց վայրի բնությունը պաշտպանելու և տեղական բնակչության համար կանաչ հատվածներում հնարավորություններ առաջարկելու համար:

Ընդհանուր առմամբ, **ԵՄ-ն կօգտագործի իր դիվանագիտական և ֆինանսական գործիքները, որպեսզի կանաչ դաշինքները Աֆրիկայի և այլ գործընկեր երկրների ու տարածաշրջանների հետ իր հարաբերությունների մասը կազմեն,** մասնավորապես՝ Լատինական Ամերիկայում, Կարիբյան ավազանում, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում:

ԵՄ-ն պետք է նաև ամրապնդի ընթացիկ նախաձեռնությունները և երրորդ երկրների հետ համագործակցի կլիմային և շրջակա միջավայրին առնչվող առանցքային հարցերի շուրջ: Սա կարող է ներառել հանածո վառելիքի գլոբալ սուբսիդիաների դադարեցում՝ համաձայն G20-ի ներքո պարտավորությունների, հանածո վառելիքի ենթակառուցվածքի բազմակողմ հաստատությունների կողմից ֆինանսավորման փուլային դադարեցում, կայուն ֆինանսավորման ուժեղացում, ածխային բոլոր նոր կայանների կառուցման դադարեցում և մեթանի արտանետումների կրճատմանն ուղղված գործողություններ:

ԵՄ-ն նաև ընդունում է, որ կլիմայական և շրջակա միջավայրի համընդհանուր մարտահրավերները սպառնալիքի զգալի բազմապատկման և անկայունության աղբյուր են: Էկոլոգիական անցումը վերափոխելու է աշխարհաքաղաքականությունը, ներառյալ՝ համաշխարհային տնտեսական, առևտրի և անվտանգության շահերը: Սա մարտահրավերներ կստեղծի մի շարք պե-

տությունների և հասարակությունների համար: ԵՄ-ն կաշխատի բոլոր գործընկերների հետ՝ կլիմայի և շրջակա միջավայրի փոփոխության դեպքում կայունության բարձրացման ուղղությամբ, որպեսզի կանխարգելի այդ մարտահրավերների հանգեցումը բախումների, սննդամթերքի անապահովության, բնակչության տեղահանման կամ հարկադիր միգրացիայի և կաջակցի արդար գլոբալ վերափոխմանը: Կլիմայական քաղաքականության առաջարկությունները պետք է կազմեն ԵՄ արտաքին հարցերի քաղաքականության և գործողությունների բաղկացուցիչ մասը, այդ թվում՝ «Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության» համատեքստում:

Առևտրային քաղաքականությունը կարող է աջակցել ԵՄ-ի էկոլոգիական անցմանը: Այն ծառայում է որպես հարթակ կլիմայական և բնապահպանական գործողությունների վերաբերյալ առևտրային գործընկերների հետ համագործակցելու համար: Կայունության պարտավորությունները, հատկապես՝ կապված կլիմայի փոփոխության գործողությունների խթանման հետ, շարունակաբար ամրապնդվել են ԵՄ առևտրային համաձայնագրերում: Հանձնաժողովը նաև ակտիվացնում է ջանքերը ԵՄ առևտրային համաձայնագրերի կայուն զարգացման պարտավորությունները կյանքի կոչելու և գործադրելու համար, և այդ ջանքերն էլ ավելի կամրապնդվեն Առևտրի գծով գլխավոր հարկադիր կատարման պաշտոնյայի նշանակմամբ: Կոնկրետ կլիմայի փոփոխության մասով, ԵՄ վերջին բոլորը համաձայնագրերը ներառում են Կողմերի պարտադիր պարտավորությունը Փարիզյան համաձայնագրի վավերացման և արդյունավետ իրականացման մասին: Հանձնաժողովը կառաջարկի Փարիզյան համաձայնագիրը դարձնել սկզբունքային և էական բաղադրիչ բոլոր հետագա համապարփակ առևտրային համաձայնագրերի համար: ԵՄ առևտրային քաղաքականությունը հեշտացնում է առևտուրը և ներդրումները կանաչ ապրանքների և ծառայությունների ուղղությամբ և խթանում է կլիմայանպաստ պետական գնումներ: Առևտրային քաղաքականությունը նաև պետք է ապահովի բարեխիղճ, արդար առևտուր և հումքի մեջ ներդրումներ, որոնք անհրաժեշտ են ԵՄ տնտեսությանը կանաչ անցումն իրագործելու համար: Այս կերպ հնարավոր կլինի պայքարել վնասակար գործելակերպերի, օրինակ՝ ապօրինի ծառահատումների դեմ, ամրապնդել նորմատիվային կարգավորման ոլորտի համագործակցությունը խթանելու ԵՄ ստանդարտները և վերացնելու վերականգնվող էներգիայի ոլորտում ոչ սակագնա-

յին խոչընդոտները: Բոլոր քիմիական նյութերը, սննդամթերքը և այլ ապրանքներ, որոնք առկա են եվրոպական շուկայում, պետք է լիովին համապատասխանեն ԵՄ համապատասխան կանոնակարգերին և ստանդարտներին: ԵՄ-ն պետք է օգտագործի «կանաչ» կարգավորման իր փորձը՝ գործընկերներին խրախուսելու մշակել այնպիսի կանոններ, որոնք նույնքան հավակնոտ են, որքան ԵՄ կանոնները՝ այդպիսով դյուրացնելով առևտուրը և խթանելով շրջակա միջավայրի պաշտպանությունն ու կլիմայի փոփոխության մեղմումն այս երկրներում:

Որպես աշխարհի ամենամեծ միասնական շուկա՝ ԵՄ-ն կարող է սահմանել չափանիշներ, որոնք կիրառվում են գլոբալ արժեքային շղթաներում: Հանձնաժողովը կշարունակի աշխատել կայուն աճի նոր ստանդարտների վրա և օգտագործել իր տնտեսական կշիռը ձևավորելու միջազգային չափանիշներ, որոնք համահունչ են ԵՄ բնապահպանական և կլիմայական հավակնություններին: Այն կաշխատի հեշտացնել շրջակա միջավայրի համար բարենպաստ ապրանքների և ծառայությունների առևտուրը երկկողմ և բազմակողմ ֆորումների ընթացքում, ինչպես նաև՝ կաջակցի ԵՄ-ի և համաշխարհային բաց և կայուն շուկաներին էկոլոգիապես մաքուր ապրանքների համար: Այն կաշխատի գլոբալ գործընկերների հետ ապահովելու ԵՄ ռեսուրսների անվտանգությունը և ռազմավարական հումքի վստահելի հասանելիությունը:

ԵՄ միջազգային համագործակցության և գործընկերության քաղաքականությունը պետք է շարունակի ուղղել հանրային և մասնավոր ֆինանսավորումը հանուն անցման: ԵՄ-ն և նրա անդամ պետությունները շարունակում են հանդիսանալ զարգացմանն ուղղված աջակցության առաջատար դոնորներ՝ տրամադրելով աշխարհի կլիմայական հանրային ֆինանսավորման ավելի քան 40%-ը: Քանի որ հանրային միջոցները չեն բավարարի, ԵՄ-ն և նրա անդամ պետությունները միասին կհամակարգեն իրենց աջակցությունը գործընկերներին ներգրավելու, մասնավոր ֆինանսները մոբիլիզացնելով ֆինանսավորման խզվածքը հաղթահարելու համար: Հանձնաժողովի առաջարկած «Հարևանության, զարգացման և միջազգային համագործակցության գործիքը» նախատեսում է իր բյուջեի 25%-ը հատկացնել կլիմայական նպատակներին: Հանձնաժողովը նաև կաջակցի ազգային հանրային ֆինանսական ռեսուրսների հանձնառությանը՝ ներդրումային միջավայրը բարելավելու և մասնավոր հատվածից ներդրումներ ստանալու համար:

Այս աշխատանքը պետք է ուղեկցվի կայուն զարգացման ուղղությամբ ներդրումների ռիսկերի նվազեցման հնարավորություններով, օրինակ՝ ֆինանսավորման երաշխիքների և խառը ֆինանսավորման գործիքներով:

Միջազգային ներդրողներին մոբիլիզացնելու համար ԵՄ-ն կմնա առաջատար՝ համաշխարհային կայուն աճին աջակցող ֆինանսական համակարգ ստեղծելու ջանքերում: ԵՄ-ն հիմնվելու է Կայուն ֆինանսավորման միջազգային պլատֆորմի վրա, որը վերջերս ստեղծվել է էկոլոգիապես կայուն ֆինանսավորման այնպիսի նախաձեռնությունների ջանքերը համակարգելու համար, ինչպիսիք են՝ տաքսոնոմիաները, բացահայտումները, ստանդարտները և պիտակները: Հանձնաժողովը նաև խրախուսելու է քննարկումները միջազգային այլ հարթակներում, մասնավորապես՝ G7-ի և G20-ի շրջանակներում:

4. ԺԱՄԱՆԱԿՆ Է ԳՈՐԾԵԼ ՄԻԱՍԻՆ. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ

Հասարակության և բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավվածությունն ու նվիրվածությունը կարևոր նշանակություն ունեն «Եվրոպական կանաչ գործարքի» հաջողության համար: Վերջին քաղաքական իրադարձությունները ցույց են տալիս, որ «խաղի կանոնների փոփոխման» քաղաքականությունները կարող են գործուն լինել միայն այն դեպքում, երբ քաղաքացիները լիովին մասնակցում են դրանց մշակմանը: Մարդիկ մտահոգված են իրենց աշխատանքի, տները տաքացնելու և ծայրը ծայրին հասցնելու խնդիրներով, և ԵՄ կառույցները պետք է նրանց հետ համագործակցեն, որպեսզի «Կանաչ գործարք»-ը հաջողություն ունենա և տևական փոփոխություններ բերի:

Հանձնաժողովը մինչև 2020 թվականի մարտը կմեկնարկի Եվրոպական կլիմայական դաշինքը, որում հիմնական ուշադրությունը դարձվելու է հասարակության ներգրավմանը կլիմայական գործողություններին երեք եղանակով: Առաջին՝ այն կխրախուսի տեղեկատվության փոխանակումը, ոգեշնչումը և կխթանի հասարակության ըմբռնումը կլիմայի փոփոխության սպառնալիքի և մարտահրավերի ու շրջակա միջավայրի դեգրադացիայի, ինչպես նաև՝ դրան հակազդելու մասին: Սա իրականացնելու համար կօգտագործվեն բազմաթիվ լծակներ և գործիքներ, ներառյալ անդամ պետություններում միջոցառումների անցկացում՝ Հանձնաժողովի շարունակական քաղաքացիական երկխոսությունների ձևաչափով: Երկրորդ՝ պետք է լինեն ինչպես իրական, այնպես էլ՝ վիրտուալ տարածքներ, որպեսզի մարդիկ արտահայտեն իրենց գաղափարներն ու ստեղծարարությունը և միասին աշխատեն հավակնոտ գործողությունների վրա, ինչպես անհատական, այնպես էլ՝ կոլեկտիվ մակարդակներում: Մասնակցող երկրներին առաջարկվում է հավատարիմ մնալ կլիմայական գործողությունների հստակ նպատակներին: Երրորդ՝ Հանձնաժողովը կաշխատի կարողությունների զարգացման վրա՝ կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ տեղական նախաձեռնություններ խթանելու նպատակով: Տեղեկատվական, ուղղորդող և կրթական մոդուլները կարող են ծառայել դրական փորձի փոխանակմանը: Հանձնաժողովը կապահովի, որ կանաչ անցումը կարևոր նշանակություն ունենա Եվրոպայի ապագայի վերաբերյալ բանավեճում:

Կլիմայական դաշինքը հիմնվելու է Հանձնաժողովի կողմից ամբողջ ԵՄ տարածքում քաղաքացիների միջև շարունակական երկխոսությունների և հավաքների, ինչպես նաև՝ սոցիալական երկխոսության հանձնաժողովների դերի վրա: Այն կշարունակի աշխատել տարածաշրջանային և տեղական համայնքների, այդ թվում՝ էներգետիկ համայնքների հզորացման ուղղությամբ: Համախմբվածության քաղաքականությունը ուժեղացվելու է քաղաքային հարթությունում, և առաջարկվող Եվրոպական քաղաքային նախաձեռնությունը աջակցություն կցուցաբերի քաղաքներին առավելագույնս օգտագործելու քաղաքաշինության կայուն ռազմավարություններ մշակելու հնարավորությունները: ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիրը» կշարունակի մնալ կարևոր դերակատար: Հանձնաժողովը կաշխատի վերջինիս հետ շարունակելու օժանդակություն տրամադրել այն քաղաքներին և շրջաններին, որոնք ցանկանում են հավատարիմ մնալ կլիմայական և էներգետիկ քաղաքականության հավակնոտ խոստումներին: Այն կմնա էական հարթակ՝ կիսելու դրական փորձը՝ տեղական մակարդակում փոփոխությունների իրականացման հնարավորությունների մասին:

Հանձնաժողովը ձգտում է նաև կրճատել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը՝ որպես կառույց և որպես գործատու: Այն 2020 թ. կներկայացնի գործողությունների համապարփակ ծրագիր՝ «Կանաչ գործարք»-ի նպատակներն իրագործելու և մինչև 2030 թվականը կլիմայական չեզոքություն ապահովելու համար: Հանձնաժողովը կոչ է անում ԵՄ բոլոր մյուս հաստատություններին, մարմիններին և գործակալություններին աշխատել իր հետ և հանդես գալ նման հավակնոտ միջոցառումներով:

Ի լրումն Կլիմայական դաշինքի, Հանձնաժողովը և անդամ պետությունները պետք է աշխատեն ապահովել, որ «Եվրոպական կանաչ գործարք»-ի պլանավորման բոլոր մատչելի գործիքները օգտագործվեն համահունչ: Դրանցից ամենակարևորը էներգետիկ և կլիմայական ազգային ծրագրերն ու ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականությունն իրականացնելու առաջարկվող ռազմավարական ազգային ծրագրերն են: Հանձնաժողովը կհետևի, որպեսզի վերջիններս համապատասխանեն նպատակներին և, որ անդամ պետությունները դրանք արդյունավետորեն կիրառեն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, կօգտագործի այնպիսի գործիքներ, ինչպիսին է «Եվրոպական կիսամյակը»:

Եվրոպական, այդ թվում՝ գյուղական համայնքների զարգացմանն ուղղված ֆոնդերը կաջակցեն գյուղական շրջաններին օգտագործել շրջանաձև տնտեսության և կենսատնտեսություն ստեղծելու հնարավորությունները: Հանձնաժողովը դա կարտացոլի գյուղական բնակավայրերի վերաբերյալ իր երկարաժամկետ տեսլականում: Այն հատուկ ուշադրություն կդարձնի հեռավոր շրջանների դերին «Եվրոպական կանաչ գործարք»-ի հարցում՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության և բնական աղետների նկատմամբ նրանց խոցելիությունը և նրանց եզակի ակտիվները՝ կենսաբազմազանությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրները: Հանձնաժողովը կշարունակի աշխատանքները «Մաքուր էներգիա ԵՄ կղզիներում» նախաձեռնության շուրջ, որպեսզի մշակի երկարաժամկետ շրջանակներ ԵՄ բոլոր կղզիներում մաքուր էներգիայի անցումն արագացնելու համար:

Հանձնաժողովը և անդամ պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ քաղաքականությունն ու օրենսդրությունը կիրարկվում են և արդյունավետ գործում են: Բնապահպանական գործունեության վերանայումը կարևոր դեր է ունենալու յուրաքանչյուր անդամ պետության վիճակի քարտեզագրման գործում: Հանձնաժողովը կներկայացնի նաև «Եվրոպական կանաչ գործարք»-ին համալրող բնապահպանական գործողությունների նոր ծրագիր, որը կներառի մոնիթորինգի նոր մեխանիզմ ապահովելու էկոլոգիական նպատակներին հասնելու Եվրոպայի շարունակական ուղին: Հանձնաժողովը նաև գործարկելու է դեշբորդ վերահսկելու «Եվրոպական կանաչ գործարք»-ի բոլոր նպատակների ուղղությամբ գրանցված առաջընթացը:

Հանձնաժողովը կքննարկի Օրհուսի կանոնակարգը վերանայելու հարցը՝ **բարելավելու ԵՄ մակարդակում վարչական և դատական վերանայման հասանելիությունը այն քաղաքացիների և ՀԿ-ների համար, ովքեր մտահոգություն ունեն շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող որոշումների օրինականության վերաբերյալ:** Հանձնաժողովը նաև միջոցներ կձեռնարկի բարելավելու նրանց հասանելիությունը արդարադատության նկատմամբ բոլոր անդամ պետությունների ազգային դատարաններում: Հանձնաժողովը նաև կնպաստի ԵՄ-ի, նրա անդամ պետությունների և միջազգային հանրության կողմից բնապահպանական հանցագործությունների դեմ պայքարի ակտիվացմանն ուղղված գործողություններին:

«Եվրոպական կանաչ գործարք»-ը մեկնարկում է ԵՄ-ի աճի նոր ռազմավարություն: Այն աջակցում է ԵՄ-ի անցմանը դեպի արդար և բարեկեցիկ հասարակություն, որը կդիմակայի կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի դեգրադացիայի հետևանքով առաջ եկած մարտահրավերներին՝ բարելավելով ներկա և ապագա սերունդների կյանքի որակը: Հանձնաժողովը Եվրոպական խորհրդարանին և Եվրոպական խորհրդին կոչ է անում է հավանություն տալ «Եվրոպական կանաչ գործարք»-ին և լիովին սատարել դրանում նկարագրված միջոցառումներին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

Եվրոպական կանաչ գործարք

Հավելված «Եվրոպական կանաչ գործարք»-ի հաղորդագրությանը

Ճանապարհային քարտեզ - Հիմնական գործողություններ

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Կլիմայական հավակնություն	
Կլիմայի մասին եվրոպական օրենքի վերաբերյալ առաջարկ, որն ամրագրում է 2050 թվականի կլիմայական չեզոքության նպատակը	**2020 թ. մարտ**
ԵՄ 2030 թ. կլիմայական թիրախը առնվազն 50%-ով ավելացնելու և պատասխանատու ձևով 55%-ի հասցնելու համապարփակ ծրագիր	**2020 թ. ամառ**
Արտանետումների քվոտաների առևտրի համակարգի մասին դիրեկտիվի, Ջանքերի բաշխման մասին կանոնակարգի, Հողօգտագործման, հողօգտագործմանփոփոխության և անտառային տնտեսության մասին կանոնակարգի, Էներգաարդյունավետության մասին դիրեկտիվի, Վերականգնվող էներգիայի մասին դիրեկտիվի, Ավտոմոբիլների և միկրոավտոբուսների համար ածխաթթու գազի արտանետումների ստանդարտների վերանայումներից հետո կլիմայական ընդլայնված հավակնության իրականացման համար համապատասխան օրենսդրական միջոցառումների վերանայման առաջարկներ	**2021 թ. հունիս**

[31] Հանձնաժողովի 2020 թ. աշխատանքային պլանով առավել կիստակեցվի 2020 թ. համար հայտարարված համապատասխան գործողությունների ժամանակացույցը

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Էներգետիկ արտադրանքի հարկման մասին դիրեկտիվի վերանայման առաջարկ	**2021 թ. հունիս**
Կոնկրետ ոլորտներից ածխածնի արտանետումների սահմանաչափերի ճշգրտման մեխանիզմի առաջարկ	**2021 թ.**
Կլիմայի փոփոխության հարմարվողականության ԵՄ նոր ռազմավարություն	**2020/2021 թթ.**
Մաքուր, մատչելի և անվտանգ էներգիա	
Ազգային էներգետիկ և կլիմայական վերջնական պլանների գնահատում	**2020 թ.հունիս**
Խելացի հատվածի ինտեգրման ռազմավարություն	**2020 թ.**
«Վերանորոգման ալիք» նախաձեռնությունը կառուցապատման ոլորտի համար	**2020 թ.**
Անդրեվրոպական ցանցի էներգետիկ կարգավորման գնահատում և վերանայում	**2020 թ.**
Օֆշորային քամու վերաբերյալ ռազմավարություն	**2020 թ.**
Արդյունաբերական ռազմավարություն մաքուր և շրջանաձև տնտեսության համար	
ԵՄ արդյունաբերական ռազմավարություն	**2020 թ. մարտ**

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Շրջանաձև տնտեսության գործողությունների ծրագիր, ներառյալ՝ կայուն արտադրանքի նախաձեռնություն և հատուկ ուշադրություն ռեսուրսատար հատվածների՝ տեքստիլի, շինարարության, էլեկտրոնիկայի և պլաստիկ արտադրության վրա	**2020 թ. մարտ**
Կլիմայապես չեզոք և շրջանառու արտադրանքի առաջատար շուկաների խթանման նախաձեռնություններ էներգատար արդյունաբերական ոլորտներում	**Սկսած 2020 թ.**
Առաջարկ աջակցելու զրոյական ածխածնի արտանետմամբ պողպատի արտադրության գործընթացներին մինչև 2030 թվականը	**2020 թ.**
Մարտկոցների վերաբերյալ օրենսդրություն՝ ի աջակցություն «Մարտկոցների ռազմավարական գործողությունների ծրագրի և շրջանաձև տնտեսության	**2020 թ. հոկտեմբեր**
Առաջարկել թափոնների ոլորտի օրենսդրական բարեփոխումներ	**Սկսած 2020 թ.**
Կայուն և խելացի տրանսպորտ	
Կայուն և խելացի տրանսպորտի ռազմավարություն	**2020 թ.**
Ֆինանսավորման հայտարարություն աջակցելու հանրային վերալիցքավորման և վառելիքի վերալիցքավորման կետերի ընդլայնմանը՝ որպես վառելիքի այլընտրանքային ենթակառուցվածքների մաս	**Սկսած 2020 թ.**

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Տարբեր տրանսպորտային միջոցների համար կայուն այլընտրանքային վառելիքի արտադրությունն ու մատակարարումը խթանելու օրենսդրական տարբերակների գնահատում	**Սկսած 2020 թ.**
Համալիր տրանսպորտի մասին դիրեկտիվի լրամշակված առաջարկ	**2021 թ.**
Այլընտրանքային վառելիքի ենթակառուցվածքների մասին դիրեկտիվի և Անդրեվրոպական ցանցի տրանսպորտի կարգավորման վերանայում	**2021 թ.**
Երկաթուղիների և ներքին ջրային ուղիների կարողությունների ընդլայնման և ավելի լավ կառավարման նախաձեռնություններ	**Սկսած 2021 թ.**
Ներքին այրման շարժիչներով տրանսպորտային միջոցների համար օդի աղտոտիչ արտանետումների ավելի խիստ ստանդարտների առաջարկ	**2021 թ.**
«Կանաչ» ընդհանուր գյուղատնտեսական քաղաքա-կանության մշակում / «Ֆերմայից սեղան» ռազմավարություն	
Ազգային ռազմավարական ծրագրերի նախագծերի ուսումնասիրություն՝ հղում կատարելով «Եվրոպական կանաչ գործարք»-ի և «Ֆերմայից սեղան» ռազմավարության հավակնություններին	**2020-2021 թթ.**

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
«Ֆերմայից սեղան» ռազմավարություն Միջոցառումներ, այդ թվում՝ օրենսդրական, թունաքիմիկատների, պարարտանյութերի և հակաբիոտիկների օգտագործումը զգալիորեն նվազեցնելու համար	**2020 թ. գարուն 2021 թ.**
Կենսաբազմազանության պահպանում և պահպանություն	
2030 թ. ԵՄ կենսաբազմազանության ռազմավարություն	**2020 թ. մարտ**
Կենսաբազմազանության կորստի հիմնական պատճառների լուծմանն ուղղված միջոցառումներ	**Սկսած 2021 թ.**
ԵՄ նոր անտառային ռազմավարություն	2**020 թ.**
Անտառահատումներից զերծ արժեքային շղթաներին օժանդակելու միջոցառումներ	**Սկսած 2020 թ.**
Զրոյական աղտոտվածության հավակնություն հանուն թունավոր նյութերից զերծ միջավայրի	
Քիմիական նյութերի ռազմավարություն կայունության համար	**2020 թ. ամառ**
Ջրի, օդի և հողի զրոյական աղտոտման գործողությունների ծրագիր	**2021 թ.**
Խոշոր արդյունաբերական կայանքներից աղտոտման դեմ պայքարի միջոցառումների վերանայում	**2021 թ.**
Կայունության ինտեգրումը ԵՄ բոլոր քաղաքականություններում	
Արդար անցումային մեխանիզմի, այդ թվում՝ «Արդար անցումային հիմնադրամ»-ի և «Կայուն Եվրոպա» ներդրումային ծրագրիի առաջարկ	**2020 թ. հունվար**

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Թարմացված կայուն ֆինանսավորման ռազմավարություն	**2020 թ. աշուն**
Ոչ ֆինանսական հաշվետվության մասին դիրեկտիվի վերանայում	**2020 թ.**
Նախաձեռնություններ անդամ պետությունների և ԵՄ-ի կանաչ բյուջետավորման գործելակերպերն ուսումնասիրելու և չափորոշելու համար	**Սկսած 2020 թ.**
Պետական աջակցության համապատասխան ուղեցույցների, այդ թվում՝ շրջակա միջավայրի և էներգետիկ ոլորտի պետական աջակցության ուղեցույցների վերանայում	**2021 թ.**
Հանձնաժողովի բոլոր նոր նախաձեռնությունները համապատասխանեցնել «Կանաչ գործարք»-ի նպատակներին և խթանել նորարարությունները	**Սկսած 2020 թ.**
Շահագրգիռ կողմերը պետք է բացահայտեն և շտկեն ոչ համահունչ օրենսդրությունը, որը նվազեցնում է «Եվրոպական կանաչ գործարք»-ի իրականացման արդյունավետությունը	**Սկսած 2020 թ.**
Եվրոպական կիսամյակում Կայուն զարգացման նպատակների ինտեգրումը	**Սկսած 2020 թ.**
ԵՄ-ն՝ որպես համաշխարհային առաջնորդ	
ԵՄ-ն կշարունակի ղեկավարել կլիմայական և կենսաբազմազանության ոլորտի միջազգային բանակցությունները՝ էլ ավելի ամրապնդելով միջազգային քաղաքականության շրջանակը	**Սկսած 2019 թ.**

Գործողություններ	Նախնական ժամանակացույց[31]
Ամրապնդել «ԵՄ Կանաչ գործարք»-ի դիվանագիտությունը՝ համագործակցելով անդամ պետությունների հետ	**Սկսած 2020 թ.**
Երկկողմ ջանքեր մղելու գործընկերներին գործել և ապահովել գործողությունների ու քաղաքականության համադրելիություն	**Սկսած 2020 թ.**
Կանաչ օրակարգ Արևմտյան Բալկանների համար	**Սկսած 2020 թ.**
Աշխատել համատեղ՝ Եվրոպական կլիմայական դաշինք	
Եվրոպական կլիմայական դաշինքի մեկնարկ	**2020 թ. մարտ**
Շրջակա միջավայրի գործողությունների 8-րդ ծրագրի առաջարկ	**2020 թ.**